QUAND LA COOPÉRATION DONNE DE MERVEILLEUX RÉSULTATS…

Suite à la messe de Pâques et à la procession en mémoire du génocide à Bruxelles le 24 avril 2011, par une chaude journée, autour d'une bière aromatisée à la framboise, Haroutioun Luleci, qui dirige le chœur de l'église arménienne de Bruxelles, les yeux brillants, nous a dit, à Garik et moi : « Vous connaissez *Le Piano*, je l'ai enregistré à la télé cette semaine, c'est génial ». Et la magie de ce film nous a attrapé… Puis Karen, Mkhitaryan, un nouvel arrivant dans l'association, devenu notre secrétaire, nous a dit connaître l'auteur du film, un garçon de Gumri comme lui. Ensuite il nous a mis en contact avec Lévon Minasian.

Yannick Lebtahi, maître de conférences en sciences de l'information et communication à l'Université de Lille 3, m'a présentée à Antoine Tillard, responsable du cinéma *Le Méliès* à Villeneuve d'Ascq. C'est un cinéma d'art et d'essai à la programmation atypique, engagée, très ouverte sur le monde et la dynamique associative. Dans le cadre de la carte blanche mensu-

L'auteur du court-métrage *Le Piano* Lévon Minasian
«Դաշնամուր» կարճամետրաժ ֆիլմի ռեժիսոր Լևոն Մինասյանը

ԵՐԲ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՏԱԼԻՍ Է ՀԻԱՆԱԼԻ ԱՐԴՅՈՒՆՔ

2011 թ. շոգ ապրիլի 24-ն էր: Զատիկի պատարագից և Եղեռնի զոհերի հիշատակի երթից հետո, արքայամորու բուրմունքով գարեջուր ըմպելիս, Բրյուսելի հայկական եկեղեցու երգչախմբի ղեկավար Հարություն Լուլեցին՝ պայծառ աչքերով, ինձ ու Գարիկին ասաց. «Դուք ծանո՞թ եք «Դաշնամուրը» կինոնկարին: Այս շաբաթ ես այն հեռուստացույցից ձայնագրել եմ, դա մի հանճարեղ գործ է»: Եվ այս ֆիլմի կախարդանքը մեզ վարակեց... Այնուհետև Կարեն Մխիթարյանը՝ մեր միության նորեկ անդամը և նորընտիր քարտուղարը, մեզ հայտնեց, որ ճանաչում է ժապավենի հեղինակին, ով իր նման գյումրեցի մի երիտասարդ է: Այնուհետև նա մեզ ծանոթացրեց Լևոն Մինասյանի հետ:

Լիլ 3 համալսարանի տեղեկատվության և հաղորդակցության գիտությունների դոցենտ Յանիկ Լեբթահին ինձ ներկայացրեց Վիլնյով դ'Ասք քաղաքի «Լը Մելիես» կինոթատրոնի տնօրեն Անտուան Թիարին: Հատուկ ծրագրավորումով այս «արվեստի և փորձի կինոթատրոնը» լայն հնարավորություններ է ստեղծում և ընդառաջում հասարակական կազմակերպություններին՝ նոր ու ինքնատիպ ծրագրերի իրականացման գործում: Միջոցառումներ կազմակերպել ցանկացող միությունների համար հատկացված ամենամսյա օրերի շրջանակներում Ա. Թիարը համաձայնվեց, որ մենք 2012 թ. սեպտեմբերի 29-ին ցուցադրենք «Դաշնամուրը» կինոնկարը՝ ռեժիսոր Լևոն Մինասյանի և նրա տիկնոջ՝ ֆիլմի նկարահանման մասին պատմող գրքույկի հեղինակ Էսթեր Մանի մասնակցությամբ: Ցուցադրումից հետո Յանիկ Լեբթահին ու Գարիկ Գալստյանը հանդիսատեսի հետ վարեցին բանավեճ:

elle laissée aux associations qui souhaitent organiser un évènement, A. Tillard a accepté que nous présentions le 29 septembre 2012 le film *Le Piano* en présence du réalisateur Lévon Minasian et de son épouse Ester Mann, auteur du livret sur le tournage du film. Après cette diffusion, Yannick Lebtahi et Garik Galstyan s'étaient engagés à mener les débats avec les invités.

Ce court-métrage plein d'humour reflète cette société, désorganisée (tout particulièrement dans ce secteur touché par le tremblement de terre de 1988), spontanée, et ce peuple si sensible à tous les arts même dans les régions les plus reculées du pays.

Merci encore à tous ceux qui ont permis ce partage.

Le film se termine, l'émotion est là… Ֆիլմն ավարտվում է, տպավորությունն առկա է

Le point de vue d'une spectatrice particulièrement touchée

Comment ne pas apprécier Louisette Lamarche, cette modeste et fragile dévouée, grâce à qui aujourd'hui à Lille fonctionne l'association *Ararat* qui réunit les Arméniens de Lille et des environs. Sa nouvelle initiative a été la diffusion du court-métrage *Le Piano* de Lévon Minasian, cinéaste originaire de Gumri et résidant en France. Cet auteur en personne et sa famille ont honoré par leur présence cette soirée.

Le premier extrait de film présenté concernait le séisme de 1988, cette réalité atroce. Il est impossible d'effacer de la mémoire ce désastre naturel. Il sera sans doute oublié dans deux générations. En attendant, dans les esprits des trois générations vivant aujourd'hui il reste toujours une cicatrice, la marque de la nature. C'est le « noir » présenté par Minasian auquel succède le « blanc » imaginaire. Treize ans après, dans cette même ville ancienne qui gémit encore de ses plaies, où les gens habitent dans des conditions loin d'une vie civilisée, dans un quartier gris, dans une cabane froide et peu accueillante habite avec son vieux grand-père, célèbre musicien, la jeune adolescente qui porte sur elle le coup sévère du séisme.

Louciné est née le jour même du tremblement de terre. À peine venue dans ce monde, elle a perdu ses parents, mais aussi la capacité de parler. La fille est une enfant très douée. En la privant des soins parentaux et de capacité de parler, Dieu l'a

Lévon Minassian, Ester Mann et Yannick Lebtahi lors des débats
Լևոն Մինասյանը, Էսթեր Մանն ու Յանիկ Լեբթահին՝ բանավեճի ժամանակ

Հումորով հարուստ այս կարճամետրաժ կինոնկարն արտացոլում է ապակազմակերպված և ինքնաբուխ այն հասարակությունը, որն իր վրա է կրել 1988 թ. երկրաշարժի հարվածը: Այն անդրադառնում է նաև բոլոր արվեստների նկատմամբ այդքան զգայուն հայ ժողովրդին, նույնիսկ երկրի ամենահեռավոր շրջաններում:

Մեկ անգամ ևս շնորհակալություն բոլորին, ովքեր հնարավորություն ընձեռեցին համատեղ կիսելու այս երեկոն:

Ester Mann, auteur du livret *Le Piano* et Yannick Lebtahi, maître de conférences en sciences de l'information et communication à l'Université de Lille 3
«Դաշնամուրը» գրքույկի հեղինակ Էսթեր Մանը, և Լիլ 3 համալսարանի դոցենտ Յանիկ Լեբթահին

Առանձնապես հուզված մի հանդիսատեսի կարծիքը

Ինչպես չհարգել այն համեստ, փխրուն նվիրյալին՝ Լուիզեթ Լամարշին, ում շնորհիվ այսօր Լիլում գործում է «Արարատ» միությունը, որը համախմբում է Լիլի և նրա մերձակա բնակավայրերի հայերին: Հերթական նախաձեռնությունը ֆրանսաբնակ կինոռեժիսոր գյումրեցի Լևոն Մինասյանի «Դաշնամուրը» կարճամետրաժ ֆիլմի դիտումն էր, որին անձամբ պատվեց Լևոնն իր ընտանիքի հետ միասին:

Առաջին ներկայացված ֆիլմի դրվագները 1988 թ. դաժան իրականության՝ երկրաշարժի մասին էր: Այս բնական աղետն անհնար է ջնջել մեր հիշողությունից: Միգուցե մի երկու սերունդ հետո կմոռացվի, սակայն այսօր այն դեռևս բնության խարանն է առկա երեք սերունդների ուղեղներում: Սա Մինասյանի խոսքով ներկայացված «սև» է, որից հետո գալու է կարծեցյալ «սպիտակը»: Տասներեք տարի անց նույն այդ հինավուրց քաղաքում, որը դեռևս տնքում է իր վերքերից, ուր մարդիկ ապրում են քաղաքակիրթ կյանքից շատ հեռու պայմաններում, գորշ մի թաղամասում, սառն ու անհրապույր մի տնակում ապրում է երկրաշարժի դաժան հարվածը իր վրա կրող պարմանուհին՝ իր ծեր, բայց և ճանաչված երաժիշտ պապի հետ:

Լուսինեն ծնվել է հենց երկրաշարժի օրը, հազիվ լույս աշխարհ եկած՝ նա կորցրել է իր ծնողներին և միաժամանակ խոսելու ունակությունը: Աղջիկն ի վերուստ օժտված անձնավորություն է: Աստված զրկելով նրան ծնողական հոգածությունից և խոսելու կարողությունից, շռայլորեն պարգևել է կյանքն ու շրջապատն ընկալելու իր աշխարհը՝ երաժշտությունը: Առանց անգամ գործիքի առկայության, Լուսինեն պատրաստվում է մասնակցել մի մրցույթի, որը կայանալու է մայրաքաղաքում: Ցավեշտ է և շատ ցավալի. պապի դիմումով և քաղաքային խորհրդի մշակույթի բաժնի միջնորդությամբ նախարարությունը ժամանակավորապես տրամադրում է դաշնամուր՝ հնարավորություն տալով աղջկան պարապելու: Սակայն արի ու տես, որ դաշնամուրը մնում է բակում՝ բաց երկնքի տակ. տնակի նեղ դռնից անհնար է այն տանել ներս: Սա էլ չի կոտրում նպատակասլաց աղջկա կամքի ուժը: Նա պարապում է բացօթյա՝ բակում իրեն ունկնդրելու հնարավորություն տալով շրջապատի մարդկանց: Եվ ո՞վ կարող է պատկերացնել, որ այս նույն բակում աննպատակ վազվզող տղան՝ Գագիկը, առանձնանալով իր շրջապատից կդառնա Լուսինեի և նրա արվեստի երկրպագուն:

généreusement dotée de la musique pour pouvoir percevoir la vie et l'environnement. Sans même posséder un instrument de musique, Louciné se prépare à participer au concours qui devait se tenir dans la capitale. Une histoire rocambolesque et triste à la fois : afin de permettre à la fillette de s'entraîner, à la demande de son grand-père et par l'intermédiaire du service de la culture, la mairie lui prête temporairement un piano. Cependant, par l'ironie du sort, le piano reste dans la cour, à ciel ouvert : impossible de le faire entrer à cause de l'étroitesse de la porte de la maisonnette. Même cela ne brise pas la forte volonté de la jeune fille déterminée. Elle s'entraîne dans la cour, par tous les temps, en donnant la possibilité à son entourage de l'écouter. Et qui pouvait imaginer que Gaguik, le garçon qui courait sans but dans cette même cour, à l'insu de ses copains, deviendra le fan de Louciné et de son talent. En secret, il dépense même le peu d'argent que sa mère, sou par sou, a économisé pendant plusieurs mois pour lui acheter des chaussures, pour participer au concours à Erevan et pour offrir à Louciné des fleurs. Il était sûr de la victoire de Louciné, c'est pourquoi il y est venu avec un bouquet pour la féliciter.

En honorant sa ville, Louciné gagne le concours mais la réalité amère ne change pas. Elle revient de nouveau dans sa maison froide et peu accueillante. Le bord de la table sur lequel a été fixé un clavier de papier sert pour Louciné de piano de rêve qu'elle couvre avec soin après s'être virtuellement exercé.

Ce sont les Français qui posaient principalement des questions
Հիմնականում հարցերը տալիս էին ֆրանսիացիները

Le film se termine, l'émotion est là, la salle un moment est silencieuse. Ensuite Yannick Lebtahi, qui animait la soirée, invite au micro Lévon Minasian et son épouse Esther Mann qui a écrit le livret *Le Piano*. Ce sont les Français qui posent principalement des questions. Pour eux, il est un peu difficile de percevoir toute cette réalité arménienne. Le cinéaste répond aux questions posées même s'il est difficile d'expliquer aux Français présents les expressions « fils de chien », « j'enterre ton cœur » énoncées avec tendresse.

La diffusion est terminée. Dans la salle à côté, autour d'une table ornée de mets arméniens, Louisette attendait les participants. L'hospitalité est modeste mais vient du fond du cœur. Les contacts avec Lévon Minasian se sont poursuivis dans la pièce où se déroulait également une séance de dédicace du livret consacré au film. Pour féliciter le cinéaste, originaire de la même ville que nous, moi et ma fille Lilit, nous sommes approchées de lui. Pendant la discussion nous avons découvert que nous sommes presque du même quartier de Gumri. Nous étions également contentes d'avoir su que sa fillette parle en dialecte typique de notre ville natale malgré le fait que sa mère soit française.

Curieuse et créatrice – telle est la nature des Arméniens. Dans n'importe quel lieu, dans sa patrie ou ailleurs, l'âme féconde continue à inventer. Et il n'existe guère d'œuvre, même conçue à l'étranger, qui ne porte en elle la douleur et le sort des Arméniens.

Ruzanna Askaryan

Նա անգամ այն սուղ դրամական միջոցները, որը մայրը կոպեկ առ կոպեկ ամիսներ շարունակ հավաքել է իրեն կոշիկ գնելու համար, թաքուն ծախսում է Երևանում մրցույթին ներկա լինելու և Լուսինեին ծաղիկներ նվիրելու համար: Նա վստահ էր Լուսինեի հաղթանակի համար և ծաղկեփնջով էր ներկայացել նրան շնորհավորելու:

Քաղաքի պատիվը բարձր պահելով՝ Լուսինեն հաղթում է մրցույթում, սակայն դառն իրականությունը չի փոխվում: Նա նորից վերադառնում է տուն՝ նույն ցուրտ ու անհրապույր տնակը: Սեղանի եզրը, որտեղ ստվարաթղթի վրա ստեղնաշար է նկարված, Լուսինեի համար իր երազանքի դաշնամուրն է, որը նա խնամքով ծածկում է երևակայական պարապմունքից հետո:

Ֆիլմն ավարտվում է, տպավորությունն առկա է, դահլիճը մի պահ լուռ է: Ապա հարցազրույցը վարող Յանիկ Լեբթահին խոսափողի մոտ է հրավիրում Լևոն Մինասյանին և նրա կնոջը՝ Էսթեր Մանին, որը հեղինակել է «Դաշնամուրը» գըրքույկը: Հիմնականում հարցերը տալիս են ֆրանսիացիները, որոնց համար փոքր ինչ դժվար է ընկալել այդ ողջ հայկական իրականությունը: Ռեժիսորը սիրով պարասխանում է իրեն ուղղված հարցերին, թեկուզ և դժվար է ներկա ֆրանսիացինրին բացատրել փաղաքշանքով ասված «շան լակոտ», «թաղեմ սիրտդ» արտահայտությունները:

La table d'exposition sur l'Arménie / Հայաստանին նվիրված տաղավարը

Դիտումն ավարտված է, կից սրահում հայկական խորտիկներով զարդարված սեղանի մոտ հավաքվածներին է սպասում Լուիզեթը: Հյուրասիրությունը համեստ է, սակայն սրտաբուխ: Սրահում դեռևս շարունակվում են Լևոն Մինասյանի հետ շփումները և կինոժապավենին նվիրված գրքույկի ընծայագըրումը: Ես և աղջիկս՝ Լիլիթը, ևս մոտեցանք մեր համաքաղաքացուն՝ շնորհավորելու համար: Զրույցից պարզվեց, որ գրեթե թաղակիցներ ենք: Նաև շատ հաճելի էր իմանալ, որ նրա դստրիկը խոսում է տիպիկ գյումրեցու բարբառով՝ չնայած որ մայրը ֆրանսուհի է:

Դրպտող, ստեղծող հայի էությունն է սա. ուր էլ որ լինի, իր երկրում թե օտար, միևնույնն է ստեղծագործ հոգին շարունակում է երկնել, և չկա գեթ մի ստեղծագործություն, թեկուզ և ծնված օտարության մեջ, որ իր մեջ չկրի հայի ցավն ու ճակատագիրը:

Ռուզաննա Ասկարյան

Yervand Manarian, une star du cinéma arménien, dans le rôle du grand-père de la fille
Հայկական կինոյի աստղ Երվանդ Մանարյանը՝ աղջկա պապի դերում

Les sujets développés au cours des débats

Les débats ont porté sur plusieurs points.

En introduction au film *Le Piano* un extrait d'un autre film, *Lux aeterna* (*Lumière éternelle*) a été diffusé. L. Minasian a expliqué la raison de ce choix. Il a réalisé ce film lors du tremblement de terre qu'il a vécu en 1988. L'auteur a voulu le filmer immédiatement avec sa caméra et dix bobines de film. Il fallait témoigner et exorciser la souffrance. Mais ce travail diffi-cile ne s'est pas fait de suite. L. Minasian a envoyé ses films à développer à Erevan et a migré avec eux en France sans jamais les visionner. C'est dix ans après que Serge Avédikian, un ami cinéaste comme lui, l'a appelé pour lui dire qu'il avait trouvé des images bizarres du tremblement de terre. Ils les ont ensuite visionnées ensemble. Surpris et ému, L. Minasian a reconnu ses images et a décidé avec S. Avédikian de les monter pour en faire un film. Exactement dix ans après le sinistre en Arménie, ils sont également retournés filmer. Cette fois le tournage est en couleur et présente à nouveau les sites montrés dans le premier film ainsi que les conditions de vie et l'état d'esprit de la population. Ce film intitulé *Terra emota* (*Terre remuée*) est projeté souvent avec le premier. Il manquait une fin à ces deux œuvres. Le court-métrage *Le Piano* vient conclure le sujet en traitant de l'humour des habitants de Gumri qui, malgré tout, reste intact. Pour que le public ne connaissant pas le tremblement de terre en Arménie comprenne pourquoi la ville est dans cet état, la diffusion de quelques images de *Lux aeterna* était nécessaire aux yeux de l'artiste.

Le choix des musiques, tant du premier film que du *Piano*, a été commenté. Déterminante à chaque fois, elle illustre dans le premier film la vie de tant de personnes soufflée comme une bougie, et la souffrance des survivants. Elle permet aussi de mettre de la distanciation avec la violence du séisme et ses conséquences. Les seules paroles de l'œuvre musicale ont inspiré le titre du poème cinématographique de 1988. Ce choix musical s'est fait très vite sur le conseil d'un producteur et sans écouter d'autres œuvres. Pour la musique du *Piano* cela a été différent. Après plus de trois mois de recherche, l'air *Moments Musicaux n° 4 op. 9* de Schubert, s'est imposé. Tout le film est ainsi rythmé par cet air facile à retenir. La jeune actrice a pu aussi se l'approprier et le jouer.

Le Piano, à queue blanc, personnage principal de l'histoire, a également été choisi avec soin. C'est par lui que tout arrive et c'est lui qui crée le burlesque de l'histoire. C'est encore sur lui, sur la pianiste, sur la toile de protection au-dessus de ce piano, blanche aussi, et sur la ville, que s'arrête le plan central du court-métrage comme une respiration au milieu de l'histoire.

On a également abordé les difficultés de la traduction de certaines expressions, dues notamment à des nécessités techniques

Lévon Minasian dédicace le livret consacré au film *Le Piano*
Լևոն Մինասյանն ընծայագրում է կինոժապավենին նվիրված գրքույկը

Բանավեճի ընթացքում արծարծված թեմաները

Բանավեճն ընթացավ մի քանի թեմաների շուրջ:

«Դաշնամուրը» կինոնկարից առաջ ցուցադրվեցին հատվածներ մեկ այլ՝ «Lux aeterna» («Հավերժական լույս») ֆիլմից: Հեղինակը բացատրեց նման ընտրության նպատակը: Իր վերապրած 1988 թ. երկրաշարժի ժամանակ Լ. Մինասյանը ցանկացել է անմիջապես իր տեսախցիկով և 10 կինոժապավեններով նկարահանել մի ֆիլմ: Հարկավոր էր վավերագրել և սփոփել աղետյալների տառապանքն ու վիշտը: Սակայն այս դժվար աշխատանքը միանգամից չիրագործվեց: Լևոնն ուղարկեց այս ֆիլմերը Երևան՝ երևակելու, և Ֆրանսիա տեղափոխվելիս վերցրեց իր հետ՝ առանց գեթ մեկ անգամ նայելու: Տաս տարի հետո էր, երբ նրա ընկերը՝ կինոռեժիսոր Սերժ Ավետիքյանը նրան կանչեց՝ ասելով, որ գտել է երկրաշարժի մասին արտասովոր կադրեր: Միասին նայելուց հետո, զարմացած և հուզված, Լևոն Մինասյանը ճանաչել է իր նկարահանած ժապավենները: Այնուհետև Ս. Ավետիքյանի հետ միասին որոշել են մոնտաժել՝ այն դարձնելով ֆիլմ: Հայաստանում տեղի ունեցած աղետից ուղիղ տաս տարի անց, նրանք վերադառնում են հայրենիք՝ ֆիլմ նկարելու համար: Այս անգամ նկարահանումները գունավոր ժապավենի վրա էին և ներկայացնում էին ինչպես այն վայրերը, որոնք պատկերված էին առաջին ֆիլմում, այնպես էլ ժողովրդի կյանքի պայմաններն ու հոգեվիճակը: «Terra emota» («Անհանգիստ հողը») վերնագիրը կրող այս ֆիլմը հաճախ ցուցադրվում է առաջինի հետ միասին: Այդ երկու աշխատանքներին պակասում էր մի վերջնամաս: «Դաշնամուրը» կարճամետրաժ կինոնկարը եկավ եզրափակելու այս թեման: Այն մեկնաբանում է Գյումրիի բնակիչների հումորը, որը, չնայած փորձություններին, մնացել է անխաթար: Կինոգործչի կարծիքով, «Lux aeterna» կինոժապավենից մի քանի կադրերի ցուցադրումը անհրաժեշտ են, որպեսզի Հայաստանի երկրաշարժի մասին անտեղյակ հանդիսատեսը հասկանա, թե ինչու՞ է քաղաքը գտնվում այս վիճակում:

Ինչպես առաջին ֆիլմի, այնպես էլ «Դաշնամուր»ի երաժշտության ընտրությունը նույնպես մեկնաբանության առարկա դարձավ: Ասես լեյտմոտիվ, այն առաջին կինոժապավենում արտացոլում է գյումրեցիների մոմի պես մարած կյանքը և վերապրածների տառապանքը: Սա նաև հնարավորություն է տալիս տարբերակել երկրաշարժի դաժանությունը և նրա հետևանքները: Երաժշտական ստեղծագործության մի քանի խոսքերն էլ հուշել են 1988 թ. ֆիլմի անվանումը: Հետևելով մի կինոարտադրողի խորհրդին, առանց լսելու այլ գործեր, շատ արագ կատարվում է երաժշտության ընտրությունը: «Դաշնամուրը» ֆիլմի երաժշտության հարցն այլ էր: Երեք ամիս տևած փնտրումներից հետո վերջնականապես ընտրվեց Շուբերտի «Երաժշտական ակնթարթներ» (n° 4, օպուս 9) մեղեդին: Ամբողջ ֆիլմին ուղեկցում է այս անչափ դյուրընկալելի մեղեդին: Երիտասարդ դերասանուհին էլ է կարողացել այն տիրապետել և նվագել:

Lévon Minasian dédicace le livret consacré au film *Le Piano*
Լևոն Մինասյանն ընծայագրում է կինոժապավենին նվիրված գրքույկը

en termes de longueur du texte sous-titré, qui ne permet pas la transmission des subtilités du « patois » local.

Interrogée à propos du livret sur le film, Ester Mann a évoqué son plaisir d'écrire sur l'Arménie, sur le « paradoxe arménien », une façon épuisante d'être entre une hospitalité généreuse et absolue, une façon de tout donner jusqu'à sa dernière chemise et une dignité orgueilleuse qu'un rien peut blesser. C'est un pays où l'on se vexe d'autant plus que l'on est proche, intime, ami. Elle a également ajouté qu'elle était en train de rédiger un roman ayant un rapport direct avec l'Arménie.

Les difficultés techniques de terrain ont également été évoquées. Les techniciens, pour moitié français et arméniens, ne parlaient absolument pas la même langue. L'équipe arménienne venant de la télévision locale n'avait jamais vu un plateau de tournage de cinéma, mais elle était douée et bricoleuse. De merveilleux comédiens professionnels ont accepté avec plaisir de tourner dans ce film à côté de beaucoup d'acteurs novices, sélectionnés parmi la population, qui oubliaient parfois leurs textes pour admirer la technique du tournage. E. Mann s'est rappelée avec humour et tendresse l'histoire de la décalée et magnifique tenue rouge de Madame Galoyan, assumée majestueusement par l'actrice, alors qu'il ne s'agit que d'une jupe passée sous les aisselles et fixée avec des broches à la veste trop juste… La magie du cinéma et le talent du réalisateur au montage ont fait le reste…

Louisette Lamarche

LA VILLE DE NOTRE ENFANCE

La treizième capitale de l'Arménie, pliée sous le poids de près de trois millénaires mais éternellement jeune dans la poursuite de sa marche triomphale, a été et reste comme une source d'inspiration pour toutes les générations d'artistes. On lui a dédié des chansons, des poèmes, des tableaux, des films... Le court-métrage *Ici-bas* était encore un documentaire qui prétendait l'être. Sa diffusion a été organisée dans la salle de l'Hospice Havré de la ville de Tourcoing, un lieu d'arts et d'échanges.

L'auteur du film Comes Chahbazian, Arménien d'origine libanaise qui réside et travaille actuellement en Belgique, lors de l'entretien avec nous, a raconté que l'idée de la création du film est née subitement, lors de balades dans les rues d'Erevan. Au début, il a filmé quelques épisodes dans la capitale, ensuite il a décidé de les réunir, de les assembler.

Jaqueline Kasparian intervewe le réalisateur du filme *Ici-bas* Comes Chahbazian
Ժաքլին Կասպարյանը հարցազրույց է վարում «Այստեղ ներքևում» ֆիլմի ռեժիսոր Կոմս Շահբազյանի հետ

C'est le troisième film de l'auteur et il faut dûment souligner qu'en 2010 il a obtenu le deuxième prix honorable du festival de *L'Abricot d'Or*. Il a également été présenté à aux festivals *Cinéma réaliste*, organisé au centre Georges Pompidou à Paris, et à celui de Punto de Vista en Espagne.

Այս պատմության գլխավոր «գործող անձը»՝ ճերմակ դաշնամուրը, նույնպես ընտրված է խնամքով: Ամեն ինչ նրանով է անցնում՝ ստեղծելով այս զվարճալի պատմությունը: Կարճամետրաժ կինոնկարի կենտրոնական կադրը, որպես պատմության շնչառություն, սևեռվում է ինչպես դաշնամուրի, այնպես էլ դաշնակահարուհու, նաև երաժշտական գործիքի վրա փռված պաշտպանական նույն ճերմակ գույնի սավանի և քաղաքի վրա:

Խոսվեց նաև որոշ արտահայտությունների թարգմանության ժամանակ հանդիպած դժվարությունների մասին, որոնք ելնում են, մասնավորապես, տեխնիկական անհրաժեշտությունից: Դրանք բխում են ենթագիր տեքստի երկարությունից, որը հնարավորություն չի տալիս հաղորդել տեղական բարբառի նրբությունները:

Պատասխանելով ֆիլմի ստեղծման մասին գրքույկին վերաբերող հարցերին, Էսթեր Մանն ընդգծեց, որ մեծ հաճույքով է գրում Հայաստանի և «հայկական պարադոքս»ի մասին. գոյատևելու սպառիչ մի ձևի՝ մեծահոգի, կատարյալ հյուրասիրության, մինչև վերջին շապիկը տալու պատրաստակամության, նաև անխոցելի ու հպարտ արժանապատվության մասին: Սա մի երկիր է, որտեղ մարդիկ ինչքան մոտ են, մտերիմ, բարեկամ, այնքան շուտ են միմյանցից նեղանում: Նա նաև ավելացրեց, որ ներկայումս գրում է մի վեպ, որն անմիջական կապ ունի Հայաստանի հետ:

Ներկայացվեցին նաև նկարահանման ժամանակ տեղ գտած տեխնիկական դժվարությունները: Տեխնիկական անձնակազմը, որի կեսը հայեր էին, կեսը՝ ֆրանսիացիներ, խոսում էին տարբեր լեզուներով և հասկանում իրար: Տեղական հեռուստատեսությունից եկած հայկական աշխատախումբն անծանոթ էր կինոնկարահանման հրապարակին, բայց շատ շնորհալի էր և հմուտ: Հիանալի պրոֆեսիոնալ դերասաններ հաճույքով համաձայնվեցին նկարահանվել ժողովրդի միջից ընտրված ակամա դերակատարների հետ: Վերջիններս հրապուրվելով նկարահանման տեխնիկայով, երբեմն մոռանում էին իրենց խոսքերը: Է. Մանը հումորով և ջերմությամբ հիշեց տիկին Գալոյանին կերպավորող դերասանուհու վեհությամբ կրած «շքեղ» և հանպատրաստից կարմիր զգեստի պատմությունը: Իրականում դա մի շրջազգեստ էր, որը բարձրացվել էր մինչև թևատակերը և զարդասեղներով ամրացվել նեղ վերնազգեստին… Կինոյի «կախարդանք»ն ու մոնտաժող ռեժիսորի տաղանդն արել են մնացած գործը…

Լուիզետ Լամարշ

ՄԵՐ ՄԱՆԿՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԸ

Հայաստանի տասներեքերորդ մայրաքաղաք Երևանը, շուրջ երեք հազարամյակների բեռի տակ կքած, բայց հավերժ երիտասարդ, իր հաղթարշավը շարունակող, եղել և մնում է բոլոր սերունդների արվեստագետների ներշնչանքի աղբյուրը: Նրան են նվիրվում երգեր, բանաստեղծություններ, կտավներ, ֆիլմեր... Ահա և մի վավերագրություն էլ հավակնում էր լինել «Այստեղ ներքևում» կարճամետրաժ կինոնկարը, որի ցուցադրությունը կազմակերպվել էր Թուրքուեն քաղաքի Հավրեի հոսպիսի՝ արվեստի և հաղորդակցության տան, սրահում:

Ֆիլմի հեղինակ լիբանանահայ Կոմս Շահբազյանը, ով այսօր ապրում և ստեղծագործում է Բելգիայում, մեզ հետ զրույցի ընթացքում պատմեց, որ ժապավենի ստեղծման գաղափարը անսպասելիորեն ծագել է Երևանում շրջագայելու ընթացքում: Սկզբում մի քանի դրվագներ է նկարել մայրաքաղաքում, ապա որոշել է միավորել դրանք և ամփոփել միատեղ:

Սա հեղինակի երրորդ ֆիլմն է, և հավուր պատշաճի պետք է նշել, որ արժանացել է 2010 թ. «Ոսկե Ծիրան» փառատոնի պատվավոր երկրորդ մրցանակին: Այն ցուցադրվել է նաև Փարիզի Ժորժ Պոմպիդուի կենտրոնում կազմակերպված «Ռեալիստական կինո» և Իսպանիայի Պունտո դե Վիստայի փառատոններում:

Sans prétendre être critique de cinéma ou spécialiste en la matière, je souhaite souligner d'emblée qu'à mon avis, celui d'un spectateur qui a passé son enfance, son adolescence et ses années adultes à Erevan, le travail du réalisateur n'a été point impressionnant.

Le film évoque le cœur architectural d'Erevan, jadis le quartier baptisé Chahar (celui des rues Amirian, Pouchkine et Sverdlov), sa destruction et son anéantissement par des méthodes qui rappellent le vandalisme. Et tout cela dans le seul but de construire des immeubles de luxe modernes. Mais, malheureusement, le spectateur étranger est resté indifférent par ignorance du problème sans avoir compris pourquoi aujourd'hui l'« âme » d'Erevan et de ses habitants de souche ont mal. De nos jours, le cœur de la ville de notre rêve est encerclé par des tours en béton qui ne s'intègrent guère dans son environnement et sont étrangères au vieil et doux Erevan. Elles sont venues pour remplacer des dizaines de perles architecturales en bazalte ou en tuf qui étaient la carte de visite de notre ville. Elles représentaient de vraies valeurs historico-culturelles et, en effet, étaient uniques par leurs corniches sculptées, leurs belles colonnes, leurs arcs ornementés. Ce n'est pas seulement le cœur de la ville qui a été dévasté mais également les âmes de nombreux Erevanais...

L'idée du film est tout à fait digne d'encouragements mais elle est inachevée. Une mauvaise image est crée chez les spectateurs étrangers quant à la vie quotidienne des habitants d'Erevan et aux méthodes d'éducation des enfants qui ne sont pas typiques de notre peuple. Certains épisodes représentent les rues entièrement ruinées, quelques bâtisses avec des pierres numérotées à propos desquelles, il y a plusieurs années, on nous avait convaincu qu'elles auraient été conservées à l'identique et érigées à nouveau dans un autre endroit. Et parmi tout cela sont représentés réfugiés les anciens Erevenais, vieux et jeunes, bébés et enfants, et quelques ateliers. À mon sens, les épisodes avec l'horloger, les joueurs de nardi, la bagarre des enfants, la mère baignant son enfant sont incomplets et non argumentés. Et les livres du leader du prolétariat jetés dans les gravats avec le portrait de Lénine sur la première page ouverte de l'un d'eux (pour moi, une idée formidable), idée qu'on pourrait considérer comme l'apothéose du film, a été malheureusement incompréhensible et insaisissable pour l'auteur lui-même. Il est étonnant que C. Chahbazian ne semble pas avoir eu conscience de la philosophie de cet épisode magnifique filmé fortuitement. Lors de l'entretien avec nous, il a sincèrement avoué que s'il avait su que c'était un des tomes des œuvres de Lénine, il aurait retouché l'image de cette page ouverte...

Néanmoins, l'esthétique et le goût ne tolèrent pas d'amis. Je pense qu'il y a des spectateurs qui ont aimé ce film. Je souhaite une nouvelle fois souligner que je ne suis pas critique de cinéma ou spécialiste en la matière, mais une simple spectatrice. Avec la douleur d'Erevan dans mon cœur, j'aimerais suggérer de ne pas altérer de la sorte, sans doute inconsciemment, la paix de la ville de mon enfance.

Jacqueline Kasparian

* * * * * *

«Une vieille femme apostrophe le pouvoir, une secrétaire enlève et remet compulsivement ses bagues, deux femmes sans visage, les deux enfants qui ne cessent de chamailler. Le monde d'*Ici-bas*

Ամենևին չհավակնելով կինոքննադատ կամ կինոգետ լինելուն, միանգամից նշեմ, որ իմ՝ հանդիսականիս կարծիքով, որն իր մանկությունը, պատանեկությունն ու հասուն տարիներն անցկացրել է Երևանում, ռեժիսորի աշխատանքը բնավ տպավորիչ չէր:

Ֆիլմը պատմում է Երևանի ճարտարապետական սրտի, նախկինում Շահար կոչված թաղամասի (Ամիրյան, Պուշկին, Սվերդլով փողոցների թաղ) վանդալիզմ հիշեցնող մեթոդներով քարուքանդի ու ոչնչացման մասին՝ հանուն այսօրվա էլիտար շենքերի: Բայց, ցավոք, օտար կինոդիտողն այդպես էլ անհաղորդ մնաց այդ պրոբլեմին, առանց հասկանալու, թե այսօր ինչու՞ է ցավում Երևանի և իսկական երևանցու «հոգին»: Մեր երազանքների քաղաքի սիրտն այսօր գնդանվել է հին ու բարի Էրիվանին խորթ և շրջապատի հետ ամենևին չմերվող բետոնակուռ բարձրահարկերով: Դրանք եկան փոխարինելու բազալտակերտ ու տուֆակերտ տասնյակ ճարտարապետական գոհարներին, որոնք մեր քաղաքի այցեքարտն էին: Դրանք իսկապես պատմամշակութային արժեքներ էին և, իիրավի, յուրահատուկ էին իրենց քանդակակուռ քիվերով, գեղեցիկ սյուներով, նախշազարդ կամարներով: Ավերվեցին ոչ միայն քաղաքի սիրտը, այլ նաև բազմաթիվ երևանցիների հոգիները...

Ֆիլմի գաղափարը միանգամայն խրախուսելի է, բայց անկատար: Օտարազգի հանդիսատեսների մոտ սխալ պատկերացում է ստեղծվում երևանցիների կենցաղի, երեխաների դաստիարակության այնպիսի մեթոդների մասին, որը բնորոշ չէ մեր ազգին: Առանձին դրվագներում ներկայացված են քարուքանդ փողոցներ, համարակալված քարերով մի շարք շինություններ, որոնց մասին տարիներ առաջ մեզ հավաստիացնում էին, որ նույնությամբ կպահպանվեն ու վերստին կհառնեն մեկ այլ վայրում: Եվ այս ամենի մեջ պատկերված են ծվարած հին երևանցիներ, ահել ու ջահել, մանուկներ ու երեխաներ, և արհեստագործական մի երկու կրպակ և շինություն: Ըստ իս, թերի ու չըպատճառաբանված էին ժամագործի, նարդի խաղացողների, երեխաների ծեծկռտուքի, երեխային լողացնող մոր դրվագները: Իսկ շինարարական աղբի մեջ նետված պրոլետարիատի առաջնորդի հատորները և դրանցից մեկի առաջին էջին բացված Լենինի դիմանկարը (ըստ իս, հրաշալի գաղափար), որ կինոնկարի ապոթեոզը կարելի էր անվանել, ցավոք, անհասկանալի ու անըմբռնելի էր հենց իր՝ ռեժիսորի համար: Զարմանալիորեն Կոմս Շահբազյանն անհաղորդ էր իր իսկ պատահականորեն ստեղծած հիանալի դրվագի փիլիսոփայությանը: Մեզ հետ զրուցելիս նա անկեղծորեն խոստովանեց, որ եթե իմանար, որ դա Լենինի աշխատությունների հատորներից մեկն էր, ապա այդ բացված էջի նկարը կմաքրեր...

Ինչևէ, գեղագիտությունն ու ճաշակը ընկեր չեն հանդուրժում: Կարծում եմ, որ կլինեն մարդիկ, ովքեր հավանեցին ֆիլմը: Եվ ցանկանում եմ նորից ընդգծել, որ կինոքննադատ կամ կինոգետ չեմ, այլ սովորական մի հանդիսատես: Երևանի ցավը սրտումս ուզում եմ հորդորել. նմանատիպ միջոցներով, գուցե և անգիտակցաբար, մի խաթարեք իմ մանկության քաղաքի հուշերը:

Ժակլին Կասպարյան

* * * * * *

«Մի տարեց կին քննադատում է ղեկավարությանը, մի քարտուղարուհի նյարդայնորեն մատերից հանում ու նորից դնում է իր մատանիները, մի երկու կին, որոնց դեմքը չի երևում, մի երկու երեխա, ովքեր անդադար վիճում են: «Այստեղ ներքևում» ֆիլմի սյուժետն անավարտ է, մասամբ զրկված իր ներքին միասնությունից, այսինքն՝ քաոսային մի վիճակ. սա է Երևանը՝ Հայաստանի մայրաքաղաքը, խորհրդային կայսրության փլուզումից քսան տարի հետո: Այս ֆիլմի միակ կապակցված կադրերը սև ու սպիտակով են նկարված, դրանք խորհրդային արխիվային նյութեր են, որոնք պատկերում են Ալեքսանդր Թամանյանի հուղարկավորությունը, այն ճարտարապետի, ով 1924 թ. ստեղծեց

incomplet, privé d'une moitié de lui-même, et donc chaotique, c'est Erevan, capitale de l'Arménie, 20 ans après la chute de l'empire soviétique. La seule image d'unité de ce film est en noir et blanc, une image des archives soviétiques montrant les funérailles d'Alexandre Tamanian, l'architecte qui dessina les plans d'Erevan en 1924 – un monde éteint et une tombe. Le nouveau monde, lui, a un visage : celui de ces deux bambins s'entredéchirant. Une guerre fratricide en germe ».

par Yann Lardeau sortie dans *Sémaphores* n° 22

VOYAGE EN ARMÉNIE

Cette fois encore, le souffle de l'Arménie planait dans l'air de l'Hospice d'Havré de Tourcoing. Le 10 décembre 2012, deux semaines après la diffusion du film sur Erevan, il a été organisé une conférence sur l'Arménie.

Le sujet de la nouvelle manifestation de l'Association des retraités artisans et commerçants a été le destin tragique des Arméniens en tant que minorité ethnique. Le conférencier Dominique Bajart, agrégé d'histoire-géographie (actuellement en retraite), un pédagogue émérite, avec conscience professionnelle s'est plongé dans ce sujet qui l'intéressait. Il a réuni et présenté au public des cartes, des documents, des diapositives et d'autres matériaux didactiques concernant la conférence.

La salle presque comble, composée exclusivement d'auditeurs français, a écouté avec un intérêt inassouvi l'histoire détaillée du conférencier portant sur le chemin suivi par l'Arménie et le peuple arménien pendant plus de six millénaires. Les « retraités » présents ont effectué une sorte d'excursion à travers toutes les époques historiques de l'Arménie, de la période ourartienne jusqu'à la République indépendante. Le conférencier a particulièrement parlé des causes de la Grande Catastrophe, du sanglant Hamid, du massacre d'Adana, de la résistance héroïque d'Ourfa, des jeunes-turcs et de leurs descendants, en soulignant la nécessité de la reconnaissance internationale du génocide arménien.

Jaqueline Kasparian échange avec Dominique Bajart après la conférence
Ժ. Կասպարյանը զրուցում է Դոմինիկ Բաժարի հետ՝ դասախոսությունից հետո

Dominique Bajart avait soigneusement étudié les sources historiques et a également présenté à l'auditoire l'histoire de l'évolution des frontières arméniennes du début du 20e siècle, de l'Arménie soviétique après la guerre et de l'indépendance de la République d'Arménie.

Les personnes présentes dans la salle ont écouté avec une grande attention l'histoire d'un pays auparavant inconnu et lointain pour eux. Ils ont posé au conférencier les questions qui les interpellaient. Le travail laborieux de l'historien français est tout à fait digne d'éloge, ce dont témoigne clairement sa conférence.

Jacqueline Kasparian

Երևանի գլխավոր հատակագիծը. մի ամբողջ պատմական ժամանակաշրջան ավարտված է, որից մնում է միայն մի շիրիմ: Իսկ նոր կյանքն ունի մի նկարագիր՝ երկու երեխաների մանկական կռիվները: Դա եղբայրասպան պատերազմի ծիլերն են»:

Յան Լարդո, տպագրված է «Սեմոֆոր», n° 22

ՃԱՄՓՈՐԴՈՒԹՅՈՒՆ ԱՌ ՀԱՅԱՍՏԱՆ

Թուրքուենի Հավրեի հոսպիսում այս անգամ ևս Հայաստանի շունչն էր սփռված: Երևանի մասին պատմող ֆիլմի ցուցադրումից երկու շաբաթ հետո, 2012 թ. դեկտեմբերի 10-ին, Հայաստանի թեմայով դասախոսություն էր կազմակերպվել:

«Թոշակառու արհեստագործների և առևտրականների միության» հերթական միջոցառման նյութը հայերի՝ որպես ազգային փոքրամասնության, ողբերգական ճակատագիրն էր: Բանախոսը՝ պատմության և աշխարհագրության ուսուցիչ (ներկայումս թոշակառու), վաստակաշատ մանկավարժ Դոմինիկ Բաժարը մասնագիտական բարեխղճությամբ խորամուխ էր եղել իրեն հետաքրքրող թեմայի մեջ: Նա հավաքել ու ունկնդիրների ցուցադրությանն էր ներկայացրել դասախոսությանն առնչվող քարտեզներ, փաստական վավերագրեր, սլայդներ, դիդակտիկ այլ նյութեր:

Գրեթե լեփ-լեցուն դահլիճը, բացառապես ֆրանսիացի ունկնդիրներ, անհագուրդ հետաքրքրությամբ լսեց զեկուցողի հանգամանալից պատմությունը Հայաստանի և հայ ժողովրդի անցած ավելի քան վեցհազարամյա ուղու մասին: Ներկա «թոշակառուներ»ը յուրօրինակ էքսկուրսիա կատարեցին Հայաստանի պատմական անցյալի բոլոր շրջափուլերը՝ սկսած ուրարտական շրջանից մինչև ժամանակակից անկախ Հանրապետությունը: Բանախոսը մանրամասնորեն խոսեց հայոց Մեծ Եղեռնի դրդապատճառների, արյունոտ Համիդի, Ադանայի կոտորածի, Ուրֆայի հերոսամարտի, երիտթուրքերի և նրանց հետնորդների մասին՝ ընդգծելով հայերի ցեղասպանության համընդհանուր միջազգային ճանաչման անհրաժեշտությունը:

Դոմինիկ Բաժարը խնամքով ուսումնասիրել էր պատմական աղբյուրները և լսարանին ներկայացրեց նաև 20-րդ դարասկզբին հայկական սահմանների վերաձևավորման, հետպատերազմյա Սովետական Հայաստանի և Հայաստանի Հանրապետության անկախացման պատմությունը:

Դահլիճում նստածները մեծ ուշադրությամբ լսեցին իրենց անծանոթ ու հեռավոր այդ երկրի պատմությունը, բանախոսին դիմեցին իրենց հետաքրքրող հարցերով: Ամենայն դրվատանքի է արժանի ֆրանսիացի պատմաբանի քրտնաջան աշխատանքը, որի վառ արդյունքը նրա հետաքրքիր դասախոսությունն էր:

Ժակլին Կասպարյան

<u>**Հարցազրույց՝ Դոմինիկ Բաժարին**</u>

2012 թ. դեկտեմբերին ինձ առիթ ընձեռնվեց մեկ անգամ ևս դասախոսություն կարդալ՝ «Հայերը՝ ողբերգական ճակատագրով մի փոքրամասնություն» թեմայով: Այն տեղի ունեցավ Թուրքուեն քաղաքի «Թոշակառու արհեստագործների և առևտրականների միության» պատվերով: Տվյալ թեմային ես արդեն անդրադարձել էի «Երրորդ տարիքի» համալսարանում, բայց այս անգամ ներկաների մեջ կային լիբանահայ համայնքի մի քանի ներկայացուցիչներ, որոնք ինձ ուղղեցին հետևյալ հարցը. «Ինչու՞ եք ընտրել հենց հայերին»: Փորձեմ պատասխանել այդ հարցին:

Կարդալով իմ առաջին դասախոսությունը «Փոքրամասնությունների աշխարհաքաղաքականությունը» թեմայով, ես եկա այն համոզման, որ կան մեծ թվով ժողովուրդներ, որոնց

Question à Dominique Bajart

Le dix décembre dernier, j’ai eu l’occasion de redonner une conférence intitulée « Les Arméniens, une minorité au destin tragique », à Tourcoing, pour le compte de l’ARIC (Association des retraités artisans et commerçants). J’avais déjà traité ce sujet pour l’UTL (Université du temps libre) mais, cette fois, il y avait plusieurs représentants de la communauté arménienne de Lille dans le public qui m’ont posé la question : « Pourquoi avoir choisi les Arméniens ? » Je vais donc tenter de répondre à cette question.

En donnant une première conférence sur la « Géopolitique des minorités », je m’étais rendu compte qu’il existait une multitude de peuples dont j’ignorais l’existence, et que beaucoup d’entre eux étaient menacés de disparition soit par extinction des derniers locuteurs, soit par assimilation ou encore par élimination physique pure et simple. Quasiment toutes les minorités doivent lutter pour préserver leur identité (langues, traditions…). J’ai alors choisi d’étudier une communauté pour illustrer ce propos et c’est l’exemple arménien qui m’a paru le plus emblématique. Plusieurs raisons m’ont, semble-t-il, amené à faire ce choix.

D’abord, surtout, le fait que les Arméniens aient été victimes d’un génocide dont, finalement, je savais très peu de choses. En tant que professeur d’histoire-géographie, j’avais étudié en détail la Shoah, qui est traitée largement dans les programmes du Secondaire, mais quasiment jamais le génocide arménien. J’avais envie d’en savoir plus : comment le gouvernement turc de l’époque avait-il pu élaborer ce projet criminel d’éliminer un peuple entier ?

Il y a quelques années, j’avais lu le très beau roman de Franz Werfel *Les 40 jours du Musah Dagh* qui m’avait déjà sensibilisé au sort des Arméniens déportés et massacrés en 1915. Il m’avait montré aussi qu’il y avait eu quelques endroits où la résistance s’était organisée, chose que j’ignorais à l’époque.

Ensuite le contexte politique de ces dernières années, avec la demande d’entrée de la Turquie dans l’UE, a relancé le problème de la reconnaissance du génocide par le l’État turc. J’ai eu envie de savoir sur quoi reposait son négationnisme, quels étaient les enjeux de cette attitude qui dure depuis presque cent ans et qui fait du problème arménien un cas extrême de ce qu’une minorité peut subir : l’élimination physique et, de surcroît, l’oubli dans un premier temps et le déni ensuite.

Enfin il y a aussi, probablement, un intérêt pour un peuple, chrétien depuis très longtemps, qui a su préserver son identité à travers l’Histoire dans un contexte souvent hostile.

Tous ces éléments (et sûrement d’autres encore !) m’ont amené à me documenter sur l’histoire des Arméniens et à apprendre à les connaître beaucoup mieux : de l’Ourartou à l’Arménie d’aujourd’hui. Quel parcours semé d’épreuves, mais aussi quelle volonté de survivre !

Dominique Bajart

LE MONDE DES LIVRES EST UN UNIVERS SANS LIMITES...

Même si c’est Erevan qui a été déclaré comme capitale mondiale du livre, les festivités consacrées aux 500 ans de l’imprimerie arménienne planent dans les importantes communautés arméniennes du monde entier. La preuve en est le Salon du livre arménien ouvert à l’initiative de la Maison de la culture arménienne de la ville d’Alfortville (banlieue de Paris). Nous, un groupe de quelques membres de l’association *Ararat* de Lille, étions heureux d’avoir l’occasion de le visiter.

Cet « univers sans limites » s’est installé dans une vaste salle dans laquelle a pris place un grand nombre d’éditions d’œuvres des écrivains arméniens classiques, de Narekatsi à Koutchak, de Sayat-Nova à Toumanian, de Raffi à Sévak, ainsi

գոյության մասին չէի էլ պատկերացնում, և որ նրանցից շատերը գտնվում են անհետացման եզրին՝ սակավաթիվ լինելու, միաձուլման կամ էլ նաև ուղղակի ֆիզիկական ոչնչացման պատճառներով: Համարյա բոլոր փոքրամասնությունները պետք է պայքարեն, որպեսզի պահպանեն իրենց ինքնությունը՝ լեզուն, սովորույթները և այլն: Ահա այս ժամանակ էր, որ որոշեցի ուսումնասիրել մի կոնկրետ փոքրամասնության պատմությունը, որը կլուսաբաներ նշված հարցադրումները: Եվ հայերի օրինակն ինձ թվաց ամենախորհրդանշականը: Կարծում եմ, որ այս ընտրությունը կատարելու դրդապատճառները մի քանիսն էին:

Նախ և առաջ նշեմ այն փաստը, որ հայերը դարձել են ցեղասպանության զոհ, որի մասին, վերջիվերջո, շատ բան չգիտեի: Որպես պատմության և աշխարհագրության ուսուցիչ ես մանրամասնորեն ուսումնասիրել էի Հոլոքոստը, որի լուսաբանմանը մեծ տեղ է հատկացված միջնակարգ դպրոցի ծրագրերում, ինչը չի կարելի ասել Հայոց Եղեռնի մասին: Ես ցանկություն ունեի էլ ավելի շատ բան իմանալ. ինչպե՞ս է այն ժամանակվա թուրքական կառավարությունը կարողացել ծրագրել այս ոճրագործությունը՝ փորձելով ոչնչացնել մի ամբողջ ժողովուրդ:

Մի քանի տարի առաջ ես կարդացել էի Ֆրանց Վերֆելի «Մուսա լեռան 40 օրը» հիանալի վեպը, որն ինձ համար արդեն դյուրընկալ էր դարձրել 1915 թ. բռնահանված և բնաջնջված հայերի ճակատագիրը: Այս գիրքն ինձ նաև սովորեցրեց, որ գոյություն են ունեցել որոշ վայրեր, որտեղ կազմակերպվել է դիմադրություն, մի բան, որ նախկինում ես չգիտեի:

Այնուհետև, վերջին տարիների քաղաքական համատեքստը, հատկապես Թուրքիայի՝ Եվրոմիությանն անդամակցվելու խնդրագիրը, ևս մեկ անգամ առաջին պլան բերեց թուրքական պետության կողմից հայոց ցեղասպանության ճանաչման խնդիրը: Իմ մեջ ցանկություն էր առաջացել իմանալ, թե ի՞նչն էր Թուրքիայի ժխտողական քաղաքականության պատճառը, որն արդեն շարունակվում է գրեթե մեկ հարյուրամյակ՝ վերածելով Հայկական Հարցը մի բացառիկ գործի, որը կարող է բաժին ընկնել մի փոքրամասնությանը. ոչ միայն ֆիզիկական ոչնչացում, այլ նաև այդ ոճրագործության նախ մոռացում, իսկ ավելի ուշ՝ ժխտում:

Վերջապես, ինչո՞ւ չէ, կար նաև հետաքրքրություն դեպի շատ վաղուց քրիստոնեություն ընդունած մի ժողովուրդը, որը պատմության ելևէջներում, և հաճախ թշնամական միջավայրում, կարողացել է պահպանել իր ինքնությունը:

Ահա այս հանգամանքներն էին, որոնք, իհա՛րկե, սպառիչ չեն, ինձ հորդորեցին փաստեր հավաքել հայերի պատմության մասին և փորձել նրանց ավելի լավ ճանաչել՝ Ուրարտուից մինչև այսօրվա Հայաստանը: Ինչպիսի՜ փորձություններով լի անցած ճանապարհ և ինչպիսի՜ վերապրելու մեծ կամք:

Դոմինիկ Բաժար

ԳՐՔԵՐԻ ԱՇԽԱՐՀԸ ՏԻԵԶԵՐՔ Է ԱՆԵԶՐ...

Թեև Երևանն է հայտարարված միջազգային գրքի մայրաքաղաք, հայ տպագրության 500-ամյակին նվիրված տոնը թևածում է ողջ աշխարհի հայաշատ համայնքներում: Վկայությունը՝ Փարիզի արվարձան Ալֆորվիլի Հայ մշակույթի տան նախաձեռնությամբ բացված հայ գրքի ցուցահանդեսն է, որն այցելելու երջանիկ պատեհությունն ունեցան Լիլի «Արարատ» հայկական միության մի խումբ անդամներ:

que de la poésie et de la prose contemporaines jusqu'à la *Banque Ottomane* d'Alexandre Toptchian.

Une attention particulière a été porté à l'histoire arménienne médiévale et contemporaine et aux éditions consacrées à la Grande Catastrophe en langues étrangères et arménienne, éditées à Erevan ou ailleurs. On pouvait également voir des écriteaux spéciaux dédiés à la littérature aussi bien française qu'européenne. Quant au rayon de la littérature pour les enfants, il a été agencé avec un grand soin.

Manvel Margaryan et le célèbre historien Claude Moutafian
Մանվել Մարգարյանն ու ճանաչված պատմաբան Կլոդ Մութաֆյանը

Des chercheurs célèbres, des lecteurs ordinaires, non seulement arméniens mais également français et étrangers, sont venus de Paris et d'autres villes de France pour participer à ce Salon. Nous avons demandé à certains d'entre eux de partager avec nous leurs impressions pour cette exposition.

Jean-Pierre Mahé, arménologue :

« C'est une grande exposition, grande selon les critères français. Il est encourageant que cette entreprise se soit transformée en une vraie fête dédiée au livre arménien, aux 500 ans de l'imprimerie arménienne qui est célébrée au niveau international. Parmi d'autres, on a exposé ici de rares éditions qui jettent une nouvelle lumière sur les pages inconnues de l'histoire des relations franco-arméniennes. Ces dernières années on a découvert environ 70 livres qui ont été offerts à Richelieu, à Mazarin et aux autres notables par des imprimeurs arméniens. La description de ces tomes luxueux, l'avis et l'attitude des cléricaux haut placés par rapport aux relations franco-arméniennes sont résumés dans la riche bibliographie de *La Bibliothèque Mazarine*.

Comme on pouvait s'y attendre, les produits exposés ont été particulièrement consacrés à l'histoire, à la culture, à la littérature et au développement de la vie sociétale du peuple arménien. Un des bijoux de l'exposition a été *L'Arménie du Levant (XI*^e^*-XIV*^e^ *siècles)* de Claude Moutafian composée de deux volumes luxueux qui, sous tous les aspects, décrivent l'évolution de la société et de la culture arméniennes aux temps du royaume de Cilicie.

Quant à moi, j'ai apporté ma modeste contribution à la fête glorieuse de l'imprimerie. J'expose ici les premiers exemples de mon œuvre intitulée *Histoire de l'Arménie : des origines à nos jours*. Mon livre s'achève par les pages dédiées aux festivités du 20^e^ anniversaire de l'indépendance de la République d'Arménie ».

Lévon Ketchian, traducteur :

« Le Salon du livre arménien devenu traditionnel, sans exagération, est un vrai salut pour les lecteurs français d'origine arménienne. La Librairie Samuelian, après avoir déployé des activités bénéficiant à son peuple est, hélas, en train de fermer, et

Մի ընդարձակ սրահում տեղավորվել էր այդ «անեզր տիեզերքը», որի մեջ իրենց ուրույն տեղն էին զբաղեցրել մեծ թվով հայ դասականների ստեղծագործությունների հրատարակություններ՝ Նարեկացուց մինչև Քուչակ, Սայաթ-Նովայից մինչև Թումանյան, Րաֆֆուց մինչև Սևակ, ինչպես նաև ժամանակակից պոեզիան ու արձակը՝ մինչև Ալեքսանդր Թոփչյանի «Բանկ Օտտոմանը»:

Առանձնակի ուշադրության էին արժանացած հայոց միջնադարյան ու նորագույն պատմությունը, Մեծ Եղեռնին նվիրված գրքերը՝ օտար և մայրենի լեզուներով, տպագրված Երևանում և այլուր: Առանձին վահանակներ էին նվիրված ֆրանսիական և, ընդհանրապես, եվրոպական գրականությանը: Հատուկ գուրգուրանքով էր հարդարված նաև մանկական գրականության բաժինը:

Ցուցահանդեսը դիտելու էին եկել Փարիզից ու Ֆրանսիայի մյուս քաղաքներից անվանի գիտնականներ, շարքային ընթերցողներ, ոչ միայն հայ, այլև տեղացի և օտարազգի: Մենք նրանցից մի քանիսին խնդրեցինք հայտնել ցուցահանդեսից ունեցած իրենց տպավորությունների մասին:

Ժան-Պիեռ Մահե, հայագետ.

«Սա մեծ ցուցահանդես է, մեծ՝ ֆրանսիական չափանիշներով: Ուրախալի է, որ այս ձեռնարկը դարձավ իսկական տոն՝ նվիրված հայ գրքին, հայ գրատպության 500-ամյակին, որը նշվում է միջազգային մակարդակով: Ի թիվս այլոց, այստեղ ներկայացված են հազվագյուտ ցուցանմուշներ, որոնք նոր լույս են սփռում հայ-ֆրանսիական հարաբերությունների պատմության անհայտ էջերին: Վերջին տարիներին հայտնաբերվել է մոտ յոթանասուն անուն գիրք, որոնք հենց իրենք՝ հայ տպագրիչներն են ընծայել Ռիշելյոին, Մազարինին, ուրիշ մեծամեծների: Այդ շքեղ հատորների նկարագրությունը, ծիրանավորների կարծիքն ու վերաբերմունքը հայ-ֆրանսիական հարաբերություններին ամփոփված են «Մազարինի գրադարանը» ճոխ մատենագիտության մեջ:

Manvel Margaryan prend l'intervew chez Jean-Pierre Mahé
Մանվել Մարգարյանը Ժան-Պիեռ Մահեի հետ հարցազրույցի ժամանակ

Ցուցանմուշները, ինչպես և պետք էր սպասել, հատկապես նվիրված էին հայ ժողովրդի պատմությանը, մշակույթին, գրականությանը, հասարակական կյանքի զարգացմանը: Ցուցադրության զարդերից էր Կլոդ Մութաֆյանի «Լևանտայի Հայաստանը (XI-XIV դարեր)» շքեղ երկհատորյա աշխատությունը, որը բազմակողմանիորեն ներկայացնում է հայ ժողովրդի հասարակական զարգացումներն ու մշակույթը Կիլիկյան թագավորության փուլում:

Ես էլ իմ համեստ ավանդն եմ բերել գրատպության պանծալի տոնին: Այստեղ են «Հայաստանի պատմությունը. սկզբնաղբյուրներից մինչև մեր օրերը» իմ աշխատության առաջին օրինակները: Գիրքս ավարտվում է Հայաստանի Հանրապետության անկախության 20-ամյակի տոնակատարությանը նվիրված էջերով»:

les bibliophiles arméniens n'ont aucune autre source pour acquérir de la littérature. Notre espoir est donc l'organisation annuelle de salons de ce type où l'on peut se procurer de tels livres. Je dois ainsi avouer que d'année en année l'exposition devient de plus en plus riche et variée.

La vocation de ce Salon est également importante du point de vue de la promotion de la littérature et de l'histoire arméniennes en français et dans d'autres langues. Ici on peut rencontrer des éditions en plusieurs langues. Par ailleurs, le rayon en langue turque est également riche. Les lecteurs aussi bien turcs que turcophones peuvent prendre connaissance de la production de la littérature et de l'historiographie arméniennes ».

Louisette Lamarche, présidente de l'association *Ararat* de Lille :

« Ce salon a été une agréable surprise pour moi. En dehors de l'Arménie je n'ai encore vu nulle part autant de livres arméniens réunis. Autour de moi sont partout des lettres et des éditions arméniennes. Le rayon pour les enfants a particulièrement attiré mon attention car j'ai deux enfants en bas âge qui apprennent l'arménien. De plus, les éditions pour enfants sont belles et adaptées aux petits. J'ai acheté une dizaine de livres dont celui *Les Jardins de Silihdar* de Zapel Yesayan en français, mais aussi des contes et des disques de musique. Cette exposition m'a donné envie de devenir une visiteuse régulière du salon annuel du livre arménien ».

Le professeur de l'Université de Californie Richard Hovhannissian lors de sa conférence
Բանախոսում է Կալիֆոռնիայի համալսարանի պրոֆեսոր Ռ. Հովհաննիսյանը

Le jour de notre visite, le programme du Salon a été varié. Le célèbre intellectuel, grand connaisseur et historien chevronné de la question arménienne, le professeur de l'Université de Californie (Los Angeles) Richard Hovhannisian a donné une conférence consistante sur le sujet de « Smirne, 1922-2011 ». Il a présenté l'histoire de cette ville où jadis habitaient beaucoup d'Arméniens et qui a joué un rôle important dans le renouveau national arménien, dans l'histoire de notre presse, dans la relance et le développement de l'enseignement et de la culture arménienne. Et cette remarquable ville maritime a été réduite en cendre en seulement quelques jours ! Des dizaines de milliers d'Arméniens et de Grecs sont devenus victimes de l'eau, du feu et de l'épée.

Dans le cadre de l'exposition, les enfants de l'école arménienne locale ont également présenté des extraits des poèmes arméniens classiques et contemporaines écrits, notamment, pour enfants. Il est aussi à noter l'exposition de peinture et de collage du peintre Roland Inayetian.

Seulement un jour et autant d'information instructive et curieuse ! C'était aussi une tentative de rapprochement des deux communautés arméniennes, celles de Lille et d'Alfortville. Dans tous les cas, les membres d'*Ararat* ont l'espoir d'approfondir et d'élargir la géographie de leurs contacts.

Manvel Margaryan,
membre de l'Union des journalistes d'Arménie

Լևոն Քեչյան, թարգմանիչ.

«Հայ գրքի արդեն ավանդական դարձած ցուցահանդեսը, չափազանցություն չթվա, ուղղակի փրկություն է ֆրանսահայ ընթերցողներիս համար: Տասնամյակներ ազգօգուտ գործունեություն ծավալած Սամուելյան գրատունը, ավա՛ղ, գոցվելու վրա է, և հայ գրասերներս գրականություն ձեռք բերելու այլ աղբյուր չունենք: Ուրեմն մեր հույսը նման ամենամյա ցուցահանդեսներն են, որտեղ ձեռք են բերվում այդպիսի գրքեր: Ուրախությամբ պիտի խոստովանեմ, որ ցուցահանդեսը տարեցտարի ավելի հարուստ և բազմաթեմա է դառնում:

Հայ գրականությունն ու հայոց պատմությունը ֆրանսերեն և ուրիշ լեզուներով ներկայացնելու տեսակետից ևս մեծ է այս ցուցահանդեսի առաքելությունը: Այստեղ կարելի է հաղորդակից դառնալ բազմալեզու հրատարակությունների: Ի դեպ, հարուստ է նաև թուրքերենի բաժինը, հայ գրականության պատմագիտության արտադրանքին կարող են նաև ծանոթանալ և՛ թուրք, և՛ թրքախոս ընթերցողները»:

Լուիզեթ Լամարշ, Լիլի «Արարատ» հայկական միության նախագահ.

«Այս ցուցահանդեսն ինձ համար հաճելի անակնկալ էր: Հայաստանից դուրս այսքան հայերեն գիրք միանգամից դեռ ոչ մի տեղ չէի տեսել: Ուր նայում եմ հայերեն տառերն են, հայերեն հրատարակություններ: Ինձ առավել շատ գրավեց մանկական բաժինը, քանի որ ունեմ երկու փոքրահասակ զավակ, որոնք հայերեն են սովորում: Բացի դրանից, մանկական հրատարակությունները գեղեցիկ են ու դյուրընթեռնելի փոքրերի համար: Ես գնել եմ մոտ մեկ տասնյակ գիրք, այդ թվում Զապել Եսայանի «Սիլիհտարի պարտեզները» ֆրանսերեն լեզվով, ինչպես նաև հեքիաթներ և երաժշտական սկավառակներ: Այս դիտումն իմ մեջ ցանկություն է առաջացրել դառնալու հայ գրքի ամենամյա ցուցահանդեսի մշտական այցելու»:

Մեր այցելության օրվա ցուցահանդեսի հայտագիրը բազմաբնույթ էր: Հանրաճանաչ մտավորական, հայկական հարցի խորահմուտ գիտակ, պատմաբան, Կալիֆոռնիայի (Լոս Անջելես) համալսարանի պրոֆեսոր Ռիչարդ Հովհաննիսյանի «Զմյուռնիա. 1922-2011» թեմայով ընդարձակ զեկուցումը ներկայացրեց երբեմնի այդ հայաշատ քաղաքի պատմությունը, նրա խաղացած դերը հայ ազգային զարթոնքի, մեր մամուլի, կրթական և մշակութային կյանքի ակտիվացման ու զարգացման մեջ: Եվ այդ երևելի ծովափնյա քաղաքն այրվեց-մոխրացավ ընդամենը մի քանի օրում, հրի, ջրի ու սրի զոհ դարձան տասնյակ հազարավոր հայեր և հույներ:

Ցուցահանդեսի ընթացքում տեղի հայկական դպրոցի երեխաները ներկայացրին նաև հայ դասական, ժամանակակից և հատկապես մանկական բանաստեղծությունների նմուշներ: Ուշագրավ էր նաև նկարիչ Ռոլանդ Ինայեթյանի գեղանկարի ու կոլաժի ցուցահանդեսը:

Մեկ օր, և այսքա՛ն ուսանելի ու դիտարժան ինֆորմացիա: Սա նաև երկու հայ համայնքների՝ Ալֆորվիլի ու Լիլի, մերձեցման փորձ էր, որը խորացնելու և աշխարհագրությունն ընդարձակելու ակնկալիքն ունենք «արարատցիներս»:

Մանվել Մարգարյան,
Հայաստանի ժուռնալիստների միության անդամ

Ruzanna Askaryan et Haïk Gambarian au Salon du livre arménien d'Alforville
Ռ. Ասկարյանն ու Հ. Ղամբարյանը Ալֆորվիլի Հայ գրքի ցուցահանդեսում

ASSEMBLÉE GÉNÉRALE DE L'ASSOCIATION ARARAT (le 8 décembre 2012)

Présents :
Edgar Avanesyan, Narine Bazinian, Garik Galstyan, Haïk Gambarian, Toros Ghasabian, Anna Hakobyan, Jacqueline Kasparian, Armine Khatchatryan, Anouch Mkrtchyan, Louisette Lamarche, Armen Sahakyan, Seyran Shirinyan, Maria Topalian, Armen Yeghinian, Styopa Yeghinian, Karen Zakarian, Kristina Zakarian

Bilan d'activité de l'année écoulée :

29 familles étaient membres en 2010/2011, 25 familles en 2011/2012 et déjà 57 familles pour la nouvelle année qui commence.

En novembre 2012, l'association *Ararat* a eu dix ans. Elle est issue de la volonté de jeunes Arméniens de pratiquer la danse arménienne. Pour obtenir le prêt d'une salle, il fallait se constituer en association. Nous avons 5 ans de gestion par Tatevik Bazinian et 5 ans de gestion par Louisette Lamarche. Louisette n'a pas toujours vocation de gérer cette association et est prête à laisser sa place de présidente dès que cela sera possible. La gestion d'une association prend beaucoup de temps, il faut faire beaucoup de démarches. Pour apprendre cela, il faut former d'autres membres de l'association *via* une participation active. Pour la réalisation des projets, Louisette pourra toujours aider son successeur.

L'année dernière nous avons eu la participation de Tamar Hanonik et de Karen Mkhitaryan qui ont respectivement pris en charge les cours de langue pour les petits et les manifestations sportives. Cette année de nouveaux membres sont arrivés dont Ruzanna Askaryan qui a remplacé Tamar dans les cours aux petits. L'association espère pouvoir mieux partager les responsabilités pour faire plus et mieux si possible mais sans vouloir aller au-delà de nos forces.

Nos réalisations de l'année passée sont :

- Poursuite des cours d'arménien le dimanche. Après une période de forte baisse du nombre des participants, la fréquentation a repris en mieux à ce jour. On peut regretter que le public de ces cours manque parfois de régularité.
- En parallèle des cours, poursuite des permanences de l'association.
- Après un long retard, en septembre 2012 ont vu le jour les trois numéros de notre gazette *Ma-Sis*.
- 1er tournoi de nardis fin novembre 2011.
- Fête de Noël avec gâteaux partagés et diffusion du film *Sardarapat déjà vu* de Tigran Khzmalyan.
- Déplacement à Arques pour voir une exposition photographique sur le Karabakh.
- Fête des femmes avec visite du Musée de la dentelle de Calais et une randonnée à la mer.
- Repas partagé de Pâques avec tournoi de dominos et danse.
- Tournoi de tennis de table adultes en juin.
- Pot de fin d'année scolaire, remerciement à nos professeurs et, tout particulièrement, à Tamar Hanonik qui nous quitte pour Lyon, remise aux enfants des tee-shirts avec lettres de l'alphabet arménien peintes par Angela et Samvel.
- Cours de danse arménienne hebdomadaires d'avril à juillet avec Lusine Ghazaryan.
- Participation à la journée de partage des cultures le 15 juillet au Parc du Barœul avec démonstration de danse, barbecue et tournoi de nardis, le tout sous la pluie battante.
- Une semaine d'intervention en danse arménienne dans deux centres de loisirs.
- Participation aux réunions du *Cesam*, l'association des associations de Mons en Barœul.

«ԱՐԱՐԱՏ» ՄԻՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՇՎԵՏՈՒ ԺՈՂՈՎԸ (8 դեկտեմբերի 2012թ.)

Ներկա էին՝
Ավանեսյան Էդգարը, Բազինյան Նարինեն, Գալստյան Գարիկը, Եղինյան Արմենը, Եղինյան Ստյոպան, Զաքարյան Կարենը, Զաքարյան Քրիստինան, Լամարշ Լուիզեթը, Խաչատրյան Արմինեն, Կասպարյան Ժակլինը, Հակոբյան Աննան, Ղամբարյան Հայկը, Ղասաբյան Թորոսը, Մկրտչյան Անուշը, Շիրինյան Սեյրանը, Սահակյան Արմենը, Թոփալյան Մարիան

Միության գործունեությունը 2012 թ.

Եթե 2010/2011 թթ. միությանն անդամագրվել էր 29 ընտանիք, 2011/2012 թթ.՝ 25, ապա նոր հաշվետու տարվա սկզբի դրությամբ արդեն ունենք 57 անդամագրված ընտանիք:

2012 թ. նոյեմբերին լրացավ «Արարատ» միության ստեղծման տաս տարին: Վերջինիս կազմավորման առիթը երիտասարդ հայերի հայկական պարեր ուսուցանելու ցանկությունն էր. իրենց տրամադրության տակ դահլիճ ունենալու համար հարկավոր էր միավորվել մի որևէ միության մեջ: Առաջին հինգ տարին «Արարատ»ը ղեկավարել է Տաթևիկ Բազինյանը, իսկ հաջորդ հինգը՝ Լուիզեթ Լամարշը: Լուիզեթն ամենևին չի հավակնում միության անընդմեջ ղեկավարի պաշտոնը և առաջին իսկ հնարավորության դեպքում պատրաստ է թողնելու նախագահի պարտականությունները: Յուրաքանչյուր միության ղեկավարումը բավական ժամանակ է խլում, անելիքներն էլ շատ են: Դրա համար հարկավոր է, որ համայնքի մյուս անդամները նախապատրաստվեն և ցուցաբերեն գործունյա մասնակցություն: Ծրագրերի իրագործման համար Լուիզեթը միշտ պատրաստ է օգնել իրեն հաջորդողին:

Անցյալ տարի մեր ծավալած գործունեության մեջ իրենց ակտիվ մասնակցությունը ցուցաբերեցին Թամար Հանոնիկն ու Կարեն Մխիթարյանը, ովքեր համապատասխանաբար ստանձնեցին փոքրերի համար հայոց լեզվի դասընթացների և մարզական միջոցառումների կազմակերպման գործերը: Այս տարի ունեցել ենք բազմաթիվ նոր անդամներ, որոնց թվում է նաև Ռուզաննա Ասկարյանը, ով փոխարինեց Թամարին՝ փոքրերին դասեր տալու գործում: Միությունը հուսով է, որ պարտականություններն ավելի արդյունավետ կբաշխվեն՝ բազմազան և հնարավորինս ավելի լավ, բայց մեր ուժերի սահմաններում:

Անցյալ տարի մենք իրականացրել ենք հետևյալ միջոցառումները.

- Հայերենի կիրակնօրյա դասընթացները շարունակվել են: Նախորդ տարվա աշակերտների թվի կտրուկ նվազումից հետո հաճախելիությունն այս ուսումնական տարում բավականին բարձրացել է: Կարելի է միայն ափսոսալ, որ երեխաների մի մասն այնքան էլ կանոնավոր չի հաճախում:
- Դասերին զուգահեռ պարբերաբար տեղի են ունենում միության հավաքները:
- Երկար ուշացումից հետո, 2012 թ. սեպտեմբերին, լույս են տեսել «Մա-Սիս» պարբերականի երեք հերթական համարները:
- 2011 թ. նոյեմբերի վերջին տեղի է ունեցել նարդու առաջին մրցաշարը:
- Նշվել է Սուրբ Ծննդյան տոնը՝ խմորեղենի միասնական սեղանի շուրջ, ցուցադրվեց Տիգրան Խզմալյանի «Սարդարապատ դեժա վյու» ֆիլմը:
- Կազմակերպվել է ուղևորություն դեպի Արք՝ Ղարաբաղին նվիրված լուսանկարների ցուցահանդեսին ծանոթանալու:
- Կանանց տոնի առթիվ կազմակերպվել է այցելություն Կալեի ժանյակի թանգարան, որին հաջորդել է ծովափնյա քայլարշավ:
- Զատիկի տոնի կապակցությամբ տրվել է համատեղ ճաշկերույթ և անցկացվել դոմինոյի մրցաշար:
- Հունիսին տեղի է ունեցել սեղանի թենիսի մեծահասակների մրցաշարը:
- Կազմակերպվել է տարեվերջյան ավարտական հանդես, մեր

- Le 29 septembre 2012, diffusion au Méliès (Villeneuve d'Ascq) du film de Levon Minasian *Le piano*, débats avec l'auteur, exposition et pot traditionnel.

Il faut signaler la grosse charge de travail administratif qu'a constitué l'action sur la danse.

Adoption à l'unanimité de ce bilan d'activité.

Bilan financier :

Le solde financier de l'association au 1er décembre 2012 s'élève à 1 871,33 € plus 358,52 € placés sur le compte livret.

Les recettes de l'année se sont élevées à 4 412,01 €. Il faut souligner les principaux postes de recettes liés à la hausse des nouvelles cotisations 2012/2013 pour 855 €, à la subvention municipale annuelle et pour les deux actions (cours de danse et fête du 15 juillet) pour un total de 1 254,17 €.

Les dépenses se sont élevées à 2 550,68 €. L'essentiel des dépenses a concerné les actions de danse et du 15 juillet, et les différentes manifestations (Pâques, Noël, AG 2011, *etc*.). À signaler en investissement l'achat d'une chaîne hifi pour l'association.

Ce bilan financier est adopté à l'unanimité.

Coût des activités et de l'adhésion :

Il a été décidé à l'unanimité de maintenir la gratuité pour les cours d'arménien, et à 15 € le coût de l'adhésion annuelle par famille. Ceux qui souhaitent donner plus peuvent toujours faire des dons, ce qui est le cas pour 3 familles mensuellement et quelques autres ponctuellement.

La gazette *Ma-Sis* sera vendue à son coût de reproduction arrondi à l'euro supérieur.

Le prix des activités ponctuelles sera décidé au fur et à mesure et au plus proche du prix coûtant.

Renouvellement des membres du Conseil d'administration et modifications statutaires

Le conseil d'administration (CA) est composé de douze membres, élus pour deux ans. Six sont sortant chaque année.

Les membres sortant cette année sont : Jaqueline Kasparian, Narine Bazinian, Armine Khachatryan, Dikran Hanonik, Karen Mkhitaryan et Margarit Mkhitaryan.

Jaqueline Kasparian et Narine Bazinian se représentent pour un nouveau mandat et sont réélues à l'unanimité. Arminé Khachatryan souhaite sortir du CA et propose que Anouch Mkrtchyan soit candidate à sa place, ce que l'intéressée accepte. Elle est élue à l'unanimité. Margarit Mkhitaryan est sortante et n'a pas fait connaitre sa volonté de rester. Dikran Hanonik et Karen Mkhitaryan ont quitté l'association pour partir vers le sud de la France. Trois postes sont donc encore à pourvoir. Armen Yeghinian, Maria Topalian et Toros Ghasabian sont élus à l'unanimité.

Compte tenu du fait que d'autres membres ont également souhaité entrer dans le CA, a été décidé à l'unanimité de créer deux postes supplémentaires portant le nombre de ses parti-

շնորհակալությունն ենք հայտնել ուսուցիչներին, հատկապես Թամար Հանոնիկին՝ Լիոն տեղափոխվելուց առաջ, իսկ երեխաներին բաժանվել են Անժելայի ու Սամվելի օգնությամբ նկարած հայոց այբուբենի տառերով վերնաշապիկներ:

- Լուսինե Ղազարյանի հետ անցկացվել են ամենշաբաթյա (ապրիլից մինչև հունիս) հայկական պարի դասեր:
- Հուլիսի 15-ին, հորդառատ անձրևի տակ, մասնակցել ենք Բարոլի այգում կազմակերպված Մշակույթների հանդիպման օրվան. պարի ցուցադրություն, խորովածի պատրաստում, նարդու մրցաշարի կազմակերպում:
- Երկու մշակութային կենտրոններում կազմակերպել ենք հայկական պարի մեկշաբաթյա պարապմունքներ:
- Մասնակցություն «Սեզամ»ի՝ Մոնս ան Բարոլի միությունների միության, ժողովներին:
- 2012 թ. սեպտեմբերի 29-ին «Մելիես» կինոթատրոնում (Վիլնյով դ'Ասք) ցուցադրվել է Լևոն Մինասյանի «Դաշնամուրը» ֆիլմը, որին հետևել են հեղինակի հետ բանավեճ, ցուցահանդես և ավանդական հյուրասիրություն:

Պետք է հատուկ նշել պարի ծրագրի իրականացման ողջ աշխատանքի ծանրությունը:

Գործունեության ընդհանուր հաշվետվությունը ընդունվեց միաձայն:

Ֆինանսական հաշվետվությունը

Միության ֆինանսական սալդոն 2012 թ. դեկտեմբերի 1-ի դրությամբ կազմել է 1 871,33 €՝ գումարած խնայողական գրքույկի 358,52 €.

Այս տարի միությունը մուտքագրել է 4 412,01 €: Նշենք դրամական հասույթի հիմնական աղբյուրները. 2012/2013 թթ. նոր անդամավճարների կտրուկ աճը (855 €), քաղաքապետարանից ստացվող ամենամյա դրամական օժանդակությունը և երկու միջոցառումների ֆինանսավորումը՝ կապված պարի դասընթացների և հուլիսի 15-ի տոնի հետ), որը կազմել է 1 254,17 €.

Ծախսերը կազմել են 2 550,68 €: Դրանք հիմնականում կապված են եղել պարի դասընթացների և հուլիսի 15-ի տոնի, ինչպես նաև տարբեր միջոցառումների հետ (Զատիկ, Սուրբ Ծնունդ, 2011 թ. Ընդհանուր ժողով և այլն): Որպես ներդրում, ընդգծենք նաև միության կարիքների համար երաժշտական կենտրոնի ձեռքբերումը:

Ֆինանսական հաշվետվությունը հաստատվեց միաձայն:

Միջոցառումների ծախսերը և անդամավճարի գումարը

Միաձայն որոշվեց պահպանել հայերենի դասերի անվճար սկզբունքը, ինչպես նաև տարեկան անդամավճարի չափը՝ 15 € ընտանիքից: Ովքեր ցանկանում են ավելին, ապա կարող են դա միշտ անել նվիրատվության տեսքով, ինչպես ամեն ամիս դա անում են երեք ընտանիքներ, իսկ մի քանիսն էլ՝ ժամանակ առ ժամանակ:

Պարբերականի գինը կմնա ինքնարժեքին մոտ:

Առանձին միջոցառումների գինը կորոշվի տեղում և կլինի հնարավորին չափ ինքնարժեքին մոտ:

Վարչական խորհրդի թարմացումը և կանոնադրական փոփոխությունները

Վարչական խորհուրդը (ՎԽ) կազմված է տասներկու անդամներից, ովքեր ընտրվում են երկու տարով: Ամեն տարի վեց հոգի վերընտրվում են:

Այս տարի լրանում է ՎԽ-ի հետևյալ անդամների լիազորությունները՝ Ժակլին Կասպարյան, Նարինե Բազինյան, Արմինե Խաչատրյան, Դիկրան Հանոնիկ, Կարեն Մխիթարյան և Մարգարիտ Մխիթարյան:

Ժաքլին Կասպարյանն ու Նարինե Բազինյանը ցանկություն են հայտնում շարունակել և վերընտրվում են միաձայն: Արմինե Խաչատրյանը ցանկություն է հայտնում դուրս գալ ՎԽ-ի

ipants à quatorze. La modification statutaire nécessaire sera effectuée. Armen Sahakyan est élu à l'unanimité.

L'élection des membres du bureau se fait à l'unanimité pendant l'assemblée générale comme suit :

Présidente : Louisette Lamarche
Vice-président : Haïk Gambarian
Trésorier : Garik Galstyan
Trésorier adjoint : Toros Ghasabian
Secrétaire : Narine Bazinian
Secrétaire adjointe : Maria Topalian

Les modifications statutaires suivantes sont aussi décidées à l'unanimité : « L'adhésion se fait par famille hébergée sous le même toit, et que cela donne une seule voix par famille pour les votes lors de l'assemblée générale ».

<u>Les projets pour l'année à venir :</u>

- Visite du Salon du livre arménien d'Alfortville le 15 décembre
- La fête du Nouvel an le 13 janvier 2013
- Tournoi d'échecs fin janvier début février (responsable Haïk Gambarian)
- Tournoi de nardis court fin février (Armen Yeghinian)
- Tournoi de belote en mars (Karen Zakarian)
- Tournoi de dominos en avril (Haïk Gambarian)
- Tournoi de ping-pong en mai (Armen Yeghinian)
- Fête des femmes en mars (Louisette Lamarche)
- Sortie au Louvre Lens (Haïk Gambarian)
- Diffusion du film *L'aurore sur le lac de Van* (Louisette Lamarche) soit le 24 avril soit pour la semaine de la solidarité internationale
- Fête pour la fin de l'année scolaire avec peut être un concert de musique
- Mise en place des cours de danse adultes et enfants
- Organisation éventuelle d'un repas arménien pour l'association *Caramel*
- Sortie dans un parc type Val Joly
- Participation au Forum des associations de la ville de Mons en Barœul en septembre 2013.

Nous n'avons pas eu de réponse favorable de la part de la Ville de Lille pour la pose d'un khatchkar dans un espace public. Par contre, ils nous proposent de nous associer à la semaine de la solidarité internationale qui a lieu chaque année en novembre. Nous pouvons également participer en décembre à la journée internationale des droits de l'Homme. Afin de pouvoir évoquer la reconnaissance du génocide et de préparer son centenaire, il est décidé de prendre contact avec les organisateurs de ces manifestations.

Nous n'avons pas eu de salle pour pratiquer le football et/ou le tennis de table chaque semaine. Même en inscrivant cet objet dans nos statuts, notre demande n'aboutira pas. L'*Ararat* est plus une association communautaire. Il nous est conseillé d'envoyer les personnes désirant pratiquer des activités sportives vers les clubs spécialisés.

Enfin un contact a été noué avec l'Union générale arménienne de bienfaisance, afin de faire partie de leur réseau et peut être réussir à partager des activités, des spectacles…

Durant l'année il est possible de procéder à des changements de programme pour cause de manque de temps et d'insuffisance de moyens.

DU SPORT CHEZ LES ARMÉNIENS

Le sport est une partie conséquente de la vie quotidienne de notre peuple, notamment dans les disciplines de force comme l'altérophilie, la boxe, la lutte *etc*. Nombreux sont les cas où les

կազմից՝ իր փոխարեն առաջարկելով Անուշ Մկրտչյանի թեկնածությունը, ով էլ ընտրվում է միաձայն: Մարգարիտ Մխիթարյանի տեղը մնում է թափուր, քանի որ նա տեղյակ չի պահել իր վերընտրվելու ցանկության մասին: Դիկրան Հանոնիկն ու Կարեն Մխիթարյանը միությունից դուրս են եկել՝ Ֆրանսիայի հարավ տեղափոխվելու պատճառով: Այսպիսով մնացած երեք թափուր տեղերը զբաղեցնելու համար Արմեն Եղինյանը, Մարիա Թոփալյանը և Թորոս Ղասաբյանն ընտրվում են միաձայն:

Հաշվի առնելով այն փաստը, որ որոշ անդամներ նույնպես ցանկություն են հայտնում մտնել ՎԽ-ի կազմի մեջ, միաձայն որոշվում է ստեղծել երկու լրացուցիչ տեղ՝ այսպիսով հասցնելով անդամների թիվը տասնչորսի: Կկատարվեն համապատասխան կանոնադրական փոփոխություններ: Արմեն Սահակյանը միաձայն ընտրվում է ՎԽ-ի անդամ:

Ընդհանուր ժողովի ժամանակ միաձայն ընտրվում է բյուրոյի հետևյալ կազմը՝

Նախագահ՝ Լուիզեթ Լամարշ
Փոխնախագահ՝ Հայկ Ղամբարյան
Գանձապահ՝ Գարիկ Գալստյան
Փոխգանձապահ՝ Թորոս Ղասաբյան
Քարտուղար՝ Նարինե Բազինյան
Փոխքարտուղար՝ Մարիա Թոփալյան

Հետևյալ կանոնադրական փոփոխությունը նույնպես որոշվում է միաձայն. «Անդամագրությունը կատարվում է ըստ մեկ հարկի տակ ապրող ընտանիքի, ընդհանուր հաշվետու ժողովի ընտրությունների ժամանակ ամեն ընտանիք ունի մեկ ձայնի իրավունք»:

<u>Ծրագրեր՝ գալիք տարվա համար</u>

- Այցելություն Ալֆորվիլի Հայ գրքի ցուցահանդես՝ դեկտեմբերի 15-ին
- Նոր Տարվա տոն՝ հունվարի 13-ին
- Շախմատի մրցաշար՝ հունվարի վերջին/փետրվարի սկզբին (պատասխանատու՝ Հայկ Ղամբարյան)
- Կարճ նարդու մրցաշար՝ փետրվարին (Արմեն Եղինյան)
- Բլոտի մրցաշար՝ մարտին (Կարեն Զաքարյան)
- Դոմինոյի մրցաշար՝ ապրիլին (Հայկ Ղամբարյան)
- Սեղանի թենիսի մրցաշար՝ մայիսին (Արմեն Եղինյան)
- Կանանց տոնի նշում՝ մարտին (Լուիզեթ Լամարշ)
- Այցելություն Լանսի Լուվր (Հայկ Ղամբարյան)
- «Վանա ծովուն արշալույսը» ֆիլմի ցուցադրում (Լուիզեթ Լամարշ)՝ ապրիլի 24-ին կամ միջազգային համերաշխության շաբաթվա շրջանակներում
- Ուսումնական տարվա ավարտական հանդեսի և, հնարավոր է, համերգի կազմակերպում (Հայկ Ղամբարյան, Ռուզաննա Ասկարյան)
- Մեծահասակների ու երեխաների համար պարի պարապմունքների վերսկսում
- Հայկական ճաշատեսակների ներկայացում և համտեսում՝ «Կարամել» միության պատվերով

représentants de notre peuple, lors des compétitions internationales et olympiques, ont fait connaître au monde le drapeau tricolore et l'hymne arméniens, sans parler déjà des échecs dans lesquels les titans arméniens enregistrent de brillantes victoires.

Les participants du tournoi de nardis / Նարդու մրցաշարի մասնակիցները

Les nardis, les dominos, les dames et autres jeux de table sont également populaires chez les Arméniens. Il est difficile de dire quand on a joué pour la première fois aux nardis, mais une chose est claire : ce jeu est d'origine orientale. Depuis la nuit des temps, il a été un loisir répandu chez les peuples des Indes, de Perse, de Transcaucasie, notamment chez les hommes qui compensaient leur oisiveté par ce jeu.

...C'était le dernier dimanche de novembre, la salle mise à disposition pour la communauté arménienne de Lille était comble. Une nouvelle manifestation, le tournoi de nardis, avait été annoncée. L'air était imprégné d'un élan sportif. Il n'existait pas de barème d'âge et, parmi les participants, on pouvait retrouver aussi bien des jeunes que des personnes d'âge mature. Cela donne une preuve supplémentaire des liens existants entre les générations, très typique de notre peuple.

L'organisation du tournoi de nardi en fin d'automne, semble devenir déjà une tradition. Cette fois le nombre de participants a été de 16. Dans une atmosphère agitée et bavarde a eu lieu la compétition qui a été prolongée au premier dimanche de décembre également. Achot Mardoyan (représentant de la génération aînée), Hamlet Vatyan, Vardan Mardoyan et Garik Galstyan sont disputé la finale et ont respectivement remporté la première, la deuxième, la troisième et la quatrième places. Des prix préparés préalablement à cette occasion leurs ont été offerts. Pour les curieux notons qu'à Erevan le premier tournoi de nardis a eu lieu il y a 50 ans, en 1964.

D'ici l'été 2013, l'association *Ararat* a également prévu d'organiser des tournois d'échecs, de dominos, de nardis court, de tennis de table et de belote. Venez nombreux pour y participer.

Ruzanna Askaryan

Les vainqueurs du tournoi : Hamlet (2e), Achot (1er), Vardan (3e) et Garik (4e)
Մրցաշարի հաղթողները՝ Համլետը (2-րդ), Աշոտը (1-ին), Վարդանը (3-րդ) և Գարիկը (4-րդ)

- Հանգստի կազմակերպում Վալ Ժոլիի տիպի հանգստավայրում
- Մասնակցություն 2013 թ. Մոնս ան Բարոլ քաղաքի Միությունների փորումին

Լիլի քաղաքապետարանը դրական պատասխան չտվեց մի որևէ հասարակական վայրում խաչքարի տեղադրման մեր խնդրանքին: Դրա փոխարեն մեզ առաջարկում են ներգրավվել միջազգային համերաշխության շաբաթի միջոցառումների մեջ, որը տեղի է ունենում ամեն տարի՝ նոյեմբերին: Կարող ենք նաև մասնակցել դեկտեմբերին կայանալիք Մարդու իրավունքների միջազգային օրվան: Որպեսզի մեկ անգամ ևս բարձրացնենք հայոց Եղեռնի թեման և պատրաստվենք այդ համազգային իրադարձության հարյուրամյակին, որոշվեց կապի մեջ մտնել այդ միջոցառումների կազմակերպիչների հետ:

Մեզ այդպես էլ չտրամադրեցին մարզադահլիճ ֆուտբոլով և սեղանի թենիսով ամեն շաբաթ զբաղվելու համար: Անգամ եթե մեր կանոնադրության մեջ փոփոխություն կատարենք, միևնույնն է, չենք հասնի մեր նպատակին: «Արարատ»ն ավելի շուտ մնում է ազգային միություն: Մեզ խորհուրդ են տալիս սպորտով զբաղվել ցանկացողներին ուղղորդել գործող մասնագիտացված ակումբներ:

Վերջապես կապ հաստատվեց Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության հետ, որը հնարավորություն կտա ներգրավվել նրա ցանցի մեջ և, միգուցե, մասնակցել նրանց կազմակերպած միջոցառումներին, ներկայացումներին և այլն:

Տարվա ընթացքում հնարավոր են որոշ ծրագրային փոփոխություններ՝ կապված ժամանակի սղության և նյութական միջոցների անբավարարության հետ:

ՍՊՈՐՏԸ ՄԵԶԱՆՈՒՄ

Սպորտը մեր ժողովրդի առօրյայի անբաժանելի մասն է, հատկապես ուժային մարզաձևերում՝ ծանրամարտ, բռնցքամարտ, ըմբշամարտ և այլն: Քիչ չեն այն պահերը, որ մեր ազգի ներկայացուցիչները միջազգային և օլիմպիական մրցամարտերում աշխարհին ճանաչելի են դարձնում հայկական եռագույնն ու հիմնը, էլ չենք խոսում շախմատի մասին, ուր մեր տիտանները փայլուն հաղթանակներ են գրանցում:

Նարդին, դոմինոն, տաման և սեղանի այլ տարատեսակ խաղերը ևս ընդունված են հայկական իրականությունում: Դժվար է ասել, թե առաջին անգամ երբ են խաղացել նարդի, բայց մի բան պարզ է, որ նարդին արևելյան ծագում ունի: Այն դեռ անհիշելի ժամանակներից եղել է Հնդկաստանի, Պարսկաստանի, Անդրկովկասի ժողովուրդներին բնորոշ զբաղմունք, հատկապես տղամարդիկ իրենց պարապը լցրել են այդ խաղով:

...Նոյեմբերի վերջին կիրակին էր. մարդաշատ էր լիլահայ համայնքին հատկացված սրահը: Հերթական միջոցառումն էր՝ նարդու մրցաշարը: Օդը հագեցած էր մարզական տրամադրությամբ: Տարիքային սահմանափակում չկար, մասնակցում էին ինչպես երիտասարդներ, այնպես էլ մեծահասակներ: Սա ևս մի ապացույց է սերունդների կապի, որը բնորոշ է մեր ազգին:

Աշնան վերջին նմանատիպ մրցաշարի կազմակերպումն արդեն դառնում է ավանդույթ: Այս անգամ մասնակիցների թիվը տասնվեցն էր: Աշխույժ, բառ ու բանով հագեցած մթնոլորտում անցկացվեցին մրցումները, որոնք շարունակվեցին դեկտեմբերի առաջին կիրակի օրը ևս: Եզրափակիչ փուլ մտան Աշոտ Մարդոյանը (ավագ սերնդի ներկայացուցիչ), Համլետ Վաթյանը, Վարդան Մարդոյանը և Գարիկ Գալստյանը, որոնք համապատասխանաբար զբաղեցրեցին առաջին, երկրորդ, երրորդ և չորրորդ տեղերը: Նրանց հանձնվեցին այս առիթով նախապես պատրաստված պարգևները: Հետաքրքրասերների համար նշենք, որ Երևանում առաջին անգամ նարդու մրցումները տեղի են ունեցել մոտ 50 տարի առաջ՝ 1964 թ.:

«Արարատ» միությունը մինչև 2013 թ. ամառ նախատեսել է նաև շախմատի, դոմինոյի, կարճ նարդու, սեղանի թենիսի և բլոտի մրցաշարերի կազմակերպում: Ուրեմն ցուցաբերե՛ք ակտիվ մասնակցություն:

Ռուզաննա Ասկարյան

TRACES ARMÉNIENNES DANS LE NORD

Nous poursuivons nos recherches sur les « traces arméniennes » dans le Nord. Après Saint Chrysole et le peintre Diranian, cette fois-ci nous allons présenter le mariniste français d'origine arménienne Arsène Chabanian dont un des tableaux, *Marine* (pastel sur carton), se trouve au musée de La Piscine de Roubaix. C'est Michel Delporte, peintre célèbre du Groupe de Roubaix, qui l'a légué à ce musée en 2001. Et ce n'est pas le seul lien de Chabanian avec Roubaix. Ses tableaux ont déjà été l'objet d'une exposition personnelle à Roubaix, à la Galerie Dujardin, du 15 à 28 février de 1924. Depuis sa création en 1905 par Eugène Dujardin, la Galerie a été pratiquement le seul espace de diffusion et de promotion de l'art contemporain à Roubaix. Elle a cessé de fonctionner dans les années 1980.



EXPOSITION A. CHABANIAN

GALERIE DUJARDIN
:: 14, boulevard de Paris ::

Monsieur A. CHABANIAN vous prie d'honorer de votre visite l'Exposition de ses Œuvres à la Galerie Dujardin, 14, boulevard de Paris.

Ouverte du 15 au 28 Février.

de 9 heures à midi et de 14 à 19 heures.

Carton d'invitation à l'exposition d'Arsène Chabanian à la Galerie Dujardin (15-28 février 1924) de Roubaix
Ռուբեի Դյուժարդենի պատկերասրահում Արսեն Շաբանյանի ցուցահանդեսի (1924թ. փետրվարի 15-28) հրավիրատոմսը

Étant fragile, le tableau de Chabanian ne fait pas partie de l'exposition permanente du célèbre musée. Il n'a été exposé au public que lors de l'exposition « Les Michel Delporte de La Piscine » en 2010, en hommage au donateur.

CONNAISSONS LES HOMMES ÉMINENTS DE NOTRE CULTURE

Sur les carrefours sanglants des siècles passés le peuple arménien, dans les luttes permanentes, a forgé sa culture exquise et raffinée et l'a toujours conservée sublime et pure, présentable au monde entier.

À la fin du 19[e] et au début du 20[e] siècle, mon peuple a vécu une tragédie inouïe dont la douleur persiste jusqu'à nos jours et n'a aucun remède pour guérir. En 1892-96 et en 1915, plus de la moitié du peuple arménien a été la victime de la mise en œuvre des programmes panturquistes des gouvernements otthoman et jeune-turc avides de sang. L'Arménie Occidentale, le berceau des Arméniens, a été dévastée et dépeuplée de ses Arméniens. Ces derniers ont été privés de leur patrie et ont été dispersés dans le monde en devenant exilés… La Diaspora s'est ainsi constituée tout comme l'Arménien de la diaspora, cette nouvelle espèce d'Arménien exilé…

Néanmoins, on peut faire une constatation étonnante : l'homme arménien, expulsé de sa maison et ayant tout perdu, n'a pas été brisé, assimilé avec les étrangers en perdant son identité nationale. Bien tout au contraire. La première partie du 20[e] siècle, cette période de la pire tragédie inconsolable du peuple arménien, a été marquée par un élan impétueux de la culture et la littérature nationales. L'Arménien terrassé, courbé et égaré a vite su redresser son dos brisé en vivant un essor sans précédent de la vie culturelle. Une constellation brillante des jeunes peintres, des

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԵՏՔԵՐ ՆՈՐԴԻ ՇՐՋԱՆՈՒՄ

Մենք շարունակում ենք Նորդի շրջանում «հայկական հետքեր»ի որոնումները: Սուրբ Քրիզոլից և նկարիչ Դիրանյանից հետո այս անգամ կներկայացնենք հայազգի ֆրանսիացի ծովանկարիչ Արսեն Շաբանյանին, որի նկարներից մեկը՝ «Ծովանկար»ը (երփնանկար՝ ստվարաթղթի վրա), գտնվում է Ռուբեի «Լա Պիսսին» թանգարանում: 2001 թ. այն թանգարանին է կտակել «Ռուբեի խմբի» հանրահայտ նկարիչ Միշել Դելպորտը: Սակայն սա Շաբանյանին Ռուբեի հետ կապող միակ փաստը չէ: Նրա նկարների անձնական ցուցահանդեսն այստեղ արդեն կազմակերպվել է դեռ 1924 թ. (փետրվարի 15-28)՝ Դյուժարդեն պատկերասրահում, որը1905 թ. հիմնադրվել է Էժենի Դյուժարդենը: Այն երկար ժամանակ Ռուբեում ժամանակակից արվեստի տարածման ու գովազդման հիրավի միակ վայրն է եղել: Պատկերասրահը դադարել է գործել 1980-ական թվականներին:

Լինելով դյուրաբեկ, Շաբանյանի նկարը հայտնի թանգարանի մշտական ցուցադրանքի մասը չի կազմում: Այն հասարակությանն է ներկայացվել միայն «Միշել Դելպորտի կտակած արվեստի գործերը՝ «Լա Պիսսին» թանգարանին» ցուցահանդեսի շրջանակներում:



La *Marine* d'Arsène Chabanian conservée au musée de La Piscine de Roubaix
Ռուբեի «Լա Պիսսին» թանգարանում պահվող Արսեն Շաբանյանին «Ծովանկար»ը

ՃԱՆԱՉԵ՛ՆՔ ՄԵՐ ԱՐՎԵՍՏԻ ԵՐԵՎԵԼԻՆԵՐԻՆ

Հին ու նոր դարերի արյունոտ քառուղիներում հայ ժողովուրդը մաքառումով կերտել է իր ոսկեղենիկ մշակույթը՝ այն միշտ պահել-պահպանելով վեհ ու զուլալ, ներկայանալի հանուր աշխարհին:

19-րդ դարի վերջին և 20-րդ դարասկզբին իմ ժողովուրդն ապրեց անլուր մի ողբերգություն, որի ցավն առ այսօր դեռ մխում է ու չունի ամոքման որևէ սպեղանի: 1892-96 և 1915 թթ. սուլթանական և երիտթուրքական կառավարությունների պան-թուրքիստական արնախում ծրագրերի իրագործման զոհը դարձավ հայ ժողովրդի կեսից ավելին: Հայերի բնօրրանը՝ Արևմտյան Հայաստանը, ամայացավ ու հայաթափվեց: Հայը զրկվեց իր բուն վաթանից ու սփռվեց աշխարհով մեկ՝ դառնալով տարագիր… ու առաջացավ Սփյուռքն ու վտարանդված հայի նոր տեսակը՝ սփյուռքահայը…

Բայց զարմանալի մի փաստ. իր տնից վտարված, ամեն ինչ կորցրած հայ մարդը ոչ թե կոտրվեց, ձուլվեց օտարի հետ՝ կորցնելով իր տեսակը, այլ՝ ընդհակառակը: 20-րդ դարի առաջին հատվածը, որը մեր ժողովրդի կյանքի ծանրագույն ու անմխիթար ողբերգության ժամանակահատվածն էր, նշանավոր-

hommes de lettres et du théâtre, des poètes et musiciens talentueux ont conquis les hauteurs de la Parnasse. La fin sanglante du 19e et le début encore plus effrayant du 20e siècle, de par ses valeurs culturelles et ses monuments immuables nous rappelle plutôt le siècle d'Or que le 5e siècle glorieux.

Avant et après la Grande Catastrophe, un groupe important de peintres arméniens a trouvé son havre dans différents pays, notamment en France. Pour un artiste arménien, la France hospitalière est devenue une côte bénie car, à cette période, Paris vivait une atmosphère intense et bouillonnante. De nouveaux mouvements et différents courants de l'art s'annonçaient et préparaient un terrain propice pour les créations esthétiques d'artistes talentueux. Dans un milieu étranger, l'artiste n'a pas perdu la face, la voix de son âme. Il a ainsi continué à vivre son arménité dans la peau de l'Arménien toujours affligé, seul, blessé du monde et du destin, nostalgique brulant avec les rêves ailés du passé… Mais il a continué de créer, de perfectionner son art, d'apprendre tout en plaçant la douleur de l'âme arménienne dans ses œuvres, certes, de formes européennes, mais arméniennes par son esprit, sa respiration et son authenticité.

Pendant la période en question, en France, nous avons eu une constellation brillante d'hommes de culture arménienne (Zakarian, Makhokhian, les Chabanian (père et fils), Adamian, Chahine, Guiourdjian, *etc.*) dont l'art a été hautement apprécié par le pays hospitalier. Parmi les peintres français d'origine arménienne de cette génération présentons à nos lecteurs le mariniste Arsène Chabanian. Son élément dans la peinture est la mer, pénétrée par des nuances tendres et transparentes de la lune et en présence de travailleurs de la mer.

Arsène Chabanian (1864-1949) dans son atelier
Արսեն Շաբանյանն (1864-1949) իր արհեստանոցում

Présentons succintement sa biographie. A. Chabanian est né en 1864 en Arménie Occidentale, dans le village Sounints de la province de Karin (Erzéroum). Il a d'abord étudié à l'école locale Sanasarian, puis au collège Mourad-Raphaelian à Venise où il a eu ses premiers cours de peinture chez Antonio Paoletti. En 1883, il rentre dans sa patrie et part ensuite à Batoumi pour travailler. Par la bienveillance du destin, en 1890, il a eu l'occasion d'aller à Théodosie et de rencontrer le mariniste mondialement célèbre d'origine arménienne Hovhannes Aïvazovski. Cette rencontre a joué un rôle décisif dans la vie du jeune peintre. Le Maître lui donne beaucoup de conseils utiles. Entre temps, A. Chabanian fait de nombreuses copies des tableaux d'Aïvazovski afin de travailler et de perfectionner son savoir-faire dans la peinture. Sa première toile sérieuse a été celle qui montre le paysage du port de Batoumi qui a été appréciée par le public. Cette circonstance a fortement encouragé Chabanian et il a décidé de perfectionner sa pratique.

վեց ազգային արվեստի ու գրականության բուռն պոռթկումով: Գետնած, կռացած ու մոլորյալ հայը շատ արագ կարողացավ շտկել իր կոտրված մեջքը՝ մշակութային կյանքի աննախադեպ վերելք ապրելով: Պառնասյան բարձունքներ նվաճեցին երիտասարդ նկարիչների, գրական ու թատերական գործիչների, տաղանդավոր պոետների և երաժիշտների մի պայծառ համաստեղություն: Արյունոտ 19-րդի դարավերջը և էլ ավելի զարհուրելի 20-րդի դարասկիզբն իր մշակութային արժեքներով ու մնայուն հուշարձաններով շատ ավելի Ոսկեդար է հիշեցնում, քան փառավորված 5-րդ դարը:

Մեծ Եղեռնից առաջ և հետո հայ նկարիչների մի ստվար խումբ իր հանգրվանը գտավ տարբեր երկրներում, հատկապես, Ֆրանսիայում: Հյուրընկալ Ֆրանսիան հայ արվեստագետի համար հանդիսացավ օրհնյալ ափ, քանզի հենց այդ ժամանակահատվածում Փարիզն ապրում էր մշակութային բուռն ու եռուն մթնոլորտում: Առաջանում էին արվեստի նորագույն շարժումներ ու տարբեր ուղղություններ, որոնք բերրի հող էին նախապատրաստում տաղանդավոր արվեստագետների ստեղծագործական արարումների համար: Հայ արվեստագետը օտարության մեջ չկորցրեց իր դեմքը, հոգու ձայնը. նա այդպես էլ ապրեց հայի կյանքով, միշտ թախծոտ, միայնակ, աշխարհից ու ճակատագրից խռով, մրմռացող կարոտախտով ու անցյալի թևավոր երազներով… Բայց նա շարունակեց ստեղծագործել, կատարելագործել իր արվեստը, սերտել ու սովորել՝ հայի հոգու ցավը դնելով իր ստեղծագործության մեջ, թեկուզ և ձևերով եվրոպական, բայց ոգով ու շնչով հայեցի ու ինքնատիպ:

Նշյալ ժամանակաշրջանում Ֆրանսիայում մենք ունեցանք հայ արվեստագետների պայծառ աստղաբույլ (Զաքարյան, Մախոխյան, Շաբանյաններ (հայր և որդի), Ադամյան, Շահին, Գյուրջյան և այլն), որոնց արվեստը բարձր գնահատվեց հյուրընկալ երկրի կողմից: Ֆրանսահայ նկարիչների վերոհիշյալ ավագ սերնդի ներկայացուցիչներից մեր ընթերցողին կներկայացնենք ծովանկարիչ Արսեն Շաբանյանին: Նկարչության մեջ նրա տարերքը ծովն է եղել՝ լուսնի մեղմ ու թափանցիկ երանգներով ներթափանցված և ծովի աշխատավորի առկայությամբ:

Համառոտ ներկայացնենք նրա կենսագրությունը: Ա. Շաբանյանը ծնվել է 1864 թ., Արևմտյան Հայաստանի Կարին (Էրզրում) գավառի Սունինց գյուղում: Նախնական կրթությունը ստացել է տեղի Սանասարյան դպրոցում և Վենետիկի Մուրադ-Ռաֆայելյան վարժարանում, որտեղ և աշակերտել ու նկարչության առաջին դասերն է վերցրել Անտոնիո Պաոլետտիից: 1883 թ. նա վերադառնում է հայրենիք, ապա աշխատանքի բերումով մեկնում Բաթում: Ճակատագրի բարեհաճությամբ 1890 թ. առիթ է ունենում մեկնել Թեոդոսիա և հանդիպել աշխարհահռչակ ծովանկարիչ հայազգի Հովհաննես Այվազովսկուն: Այս ծանոթությունը շրջադարձային դեր է կատարում սկսնակ նկարչի կյանքում: Վարպետը նրան բազում օգտակար խորհուրդներ է տալիս: Այդ շրջանում Արսեն Շաբանյանը բազմաթիվ պատճեններ է անում Այվազովսկու նկարներից՝ իր մասնագիտական հմտությունները հղկելու և կատարելագործելու նպատակով: Նրա առաջին լուրջ կտավը՝ Բաթումի նավահանգիստը պատկերող բնանկարը, արժանանում է հանրության ուշադրությանն ու գովեստին: Այս հանգամանքը Շաբանյանին խիստ ոգևորում է, և նա որոշում է կատարելագործել իր արվեստը:

Նա մեկնում է արվեստների մայրաքաղաքը՝ Փարիզ: Ժուլիանի Ակադեմիայում Շաբանյանն աշակերտում է նշանավոր մանկավարժ-նկարիչներ Գյուստավ Մորոյին, Ժան Պոլ-Լորանին և Բենժամեն Կոնստանին: Այս երևելիների դասարաններում անցկացրած շրջանում մշակվում, հղկվում ու կատարելագործվում է նրա նկարչական արվեստը:

Նա իրեն դրսևորում է տարբեր ժանրերում, թե՛ բնանկար, թե՛ դիմանկար, թե՛ նատյուրմորտ, նաև գրաֆիկա, սակայն նկարչի տարերքն այդպես էլ մնում է ծովանկարչությունը: Նա շրջում է Ֆրանսիայի ծովափնյա վայրերում՝ ամենուր ուսումնասիրելով ու խորանալով ծովի առեղծվածային տարերքի խորհրդավոր գաղտնիքների մեջ ու տրվելով ալեծուփ ջրերի կախարդանքին՝ արարում բազմաթիվ հրաշալի ծովանկարներ:

Il part pour Paris, la capitale des arts. À l'Académie Julian, Chabanian a eu comme professeur les peintres et pédagogues connus Gustave Moreau, Jean-Paul Laurens et Benjamin Constant. Le temps passé dans les classes de ces artistes célèbres lui permet de travailler, de polir et de perfectionner son art de peindre.

Il essaye son talent dans différents genres : paysage, portrait, nature morte, graphique. Cependant, l'élément de ce peintre reste la peinture de marines. Il fait le tour des sites côtiers de la France et partout il étudie et plonge dans les secrets sibyllins de l'élément mystique de la mer. Il se livre à la magie des eaux ondoyantes et crée de nombreuses peintures marines magnifiques. Encore à ses débuts, il a peint une toile merveilleuse consacrée à la mer du Nord : elle est brodée par des nuances élégantes de bleu et de rose qui assurent une atmosphère émouvante des jeux de lumière et crée une sensation de respiration et d'essoufflement de la mer froide.

Ainsi commence la marche triomphale artistique du mariniste talentueux dans les célèbres salons parisiens. Parlons de quelques faits chronologiques : 1894 – première exposition dans le Salon des artistes français à Paris ; 1896 – nouvelle exposition dans ce même Salon ; 1898 – exposition dans la Galerie de Georges Petit avec quelques 60 tableaux ; 1900 – nouvelle exposition de ses toiles chez le galeriste G. Petit. Toujours en 1900, lors de l'Exposition universelle de Paris, dans le pavillon russe, les tableaux de Chabanian *Le littoral* et *Marine au clair de lune* sont exposés à côté des œuvres d'Aïvazovski et de Bachindjaghian. À propos de ces deux peintures marines réalisées par Chabanian, le magazine français *Beaux-Arts* a publié un magnifique article dont nous allons seulement donner une courte citation :

> « ... Sa vague est un mouvement, un mouvement indépendant du pinceau du peintre. Avec son art puissant et parfaitement doux, le peintre a pu représenter la mer par une simplicité d'exécution et une diversité impressionnante ».

C'était un grand honneur pour Chabanian de soumettre ses tableaux au jugement du public et de mériter sa haute appréciation à côté d'H. Aïvazovski mondialement connu. Chabanian devient un des membres fondateurs de la *Société des marinistes* (Paris) et de la *Société de la gravure en couleurs*. Il a été un grand maître de l'eau-forte en couleur, il organisait et promotionnait ce genre. En 1902, Chabanian reçoit le titre d'officier de l'Académie française.

Le gouvernement français achète pour le Musée du Luxembourg les tableaux *Au clair de lune*, *Pleine lune*, *Marine*, et pour d'autres établissement publics – les œuvres *Femmes ramassant les écrevisses*, *Coucher de soleil en Bretagne* et *La Vague*.

Le tableau *Femmes ramassant les écrevisses* a été revendu lors de l'exposition organisée par Chabanian à Londres. C'est la princesse Thek et la cousine du roi d'Angleterre qui l'achetèrent. En 1907, le célèbre tableau a été reproduit en couleur dans le magazine parisien *L'Illustration*. Dans cet œuvre du maître, les femmes chargées de durs travaux sont représentées d'une manière très impressionnante, jusqu'à être palpables, sous la lumière transparente qui sillonnait la mer.

Pendant le premier quart du 20^{e} siècle, chaque année, l'artiste prolifique s'est présenté au public français raffiné lors de plusieurs expositions dans différentes galeries célèbres parisiennes. En 1926, le gouvernement français a décerné la médaille de la Légion d'Honneur à l'artiste de grand mérite en appréciant à sa juste valeur sont art.

Chabanian a été, à maintes reprises, exposé dans différents pays et villes : Londres, Bruxelles, Alexandrie, Le Caire, Marseille, Tokyo… De 1926 à 1930, Chabanian a participé aux expositions organisées par *l'Association « Ani » des peintres arméniens.*

Դեռևս իր ստեղծագործության նախնական շրջանում նա Հյուսիսային ծովին նվիրված մի հրաշալի նկար է երկնել՝ կապույտի և վարդագույնի նրբագեղ երանգներով ասեղնագործված, որոնք լուսային խաղերի հուզական մթնոլորտ են ապահովում ու ստեղծում ծովի պաղ շնչառության զգացողությունն ու հևքը:

Arsène Chabanian (1864-1949)
Արսեն Շաբանյան (1865-1949)

Եվ սկսվում է տաղանդաշատ ծովանկարչի ստեղծագործական հաղթարշավը փարիզյան նշանավոր սալոններում: Խոսենք մի քանի ժամանակագրական փաստերով. 1894 թ.՝ առաջին ցուցահանդեսը Փարիզի Ֆրանսիացի Արվեստագետների Պատկերասրահում, 1896 թ.՝ նոր ցուցահանդես նույն պատկերասրահում, 1898 թ.՝ ցուցահանդես Ժորժ Պըտիի պատկերասրահում՝ վաթսուն կտավով, 1900 թ.՝ կտավների նոր ցուցահանդես Ժ. Պըտիի սալոնում: Նույն 1900 թ. Փարիզի Համաշխարհային ցուցահանդեսի ռուսական բաժնում, Այվազովսկու և Բաշինջաղյանի աշխատանքների կողքին, ցուցադրվում են Ա. Շաբանյանի «Ծովափ» և «Ծովանկար լուսնյակ գիշերով» կտավները: Ֆրանսիական «Գեղարվեստի ամսագիրը» Շաբանյանի վրձնած այս երկու ծովանկարների մասին հրաշալի մի հոդված է տպագրել, որից ընդամենը մի փոքրիկ մեջբերում ենք անում.

> «... Իր ալիքը մի շարժում է, նկարչի վրձնից անկախ մի շարժում: Հզոր և միանգամայն փափուկ արվեստով նկարիչը կարողացել է ներկայացնել ծովը՝ կատարողական պարզությամբ և տպավորիչ զանազանությամբ»:

Շաբանյանի համար մեծ պատիվ էր աշխարհահռչակ Հովի. Այվազովսկու կողքին իր կտավները ներկայացնել հասարակության դատին և արժանանալ բարձր գնահատականի: Նա դառնում է Փարիզի «Ծովանկարիչների ընկերության» և «Գունավոր փորագրության ընկերության» առաջատար հիմնադիրներից մեկը: Նա գունավոր օֆորտի մեծ վարպետ էր և այս բնագավառի ջատագովն ու կազմակերպիչը: 1902 թ. Ա. Շաբանյանն արժանանում է ֆրանսիական ակադեմիայի սպայի տիտղոսին:

Ֆրանսիական կառավարությունը Փարիզի Լյուքսեմբուրգի թանգարանի համար գնում է «Լուսնի լույսով», «Լիալուսին», «Ծովանկար» կտավները, իսկ պետական այլ հաստատությունների համար՝ «Ծովախեցգետին որսացող կանայք», «Վերջալույսը Բրետանում» և «Ալիք» գործերը:

«Կարիտոս որսացող կանայք» կտավը Շաբանյանի Լոնդոնում կազմակերպած ցուցահանդեսի ժամանակ վերավաճառվում է: Այն գնում են արքայադուստր Թեքը և Անգլիայի թագավորի զարմուհին: 1907 թ. հանրահայտ կտավը գունավոր տպագրվում է Փարիզի «Պատկերազարդումներ» (« Illustrations ») հանդեսում: Նկարչի այս աշխատանքում ծովն ակոսող թափանցիկ լույսի մեջ խիստ տպավորիչ ու ընդհուպ շոշափելի են պատկերված դժվարին աշխատանքի լծված կանայք:

20-րդ դարասկզբի առաջին քառորդի յուրաքանչյուր տարում բեղմնավոր արվեստագետը անհատական ցուցահանդեսներով է ներկայացել նրբաճաշակ ֆրանսիական հասարակությանը՝ փարիզյան տարբեր անվանի սալոններում: 1926 թ. ֆրանսիական կառավարությունը բազմավաստակ արվեստագետին պարգևատրում է «Պատվո լեգեոն» շքանշանով՝ ըստ արժանվույնս գնահատելով նրա արվեստը:

Շաբանյանը բազում ցուցահանդեսներով ներկայացել է տարբեր երկրներում ու քաղաքներում. Լոնդոն, Բրյուսել, Ալեքսանդրիա, Կահիրե, Մարսել, Տոկիո… 1926-30 թթ. նա մասնակցել է հայ նկարիչների կազմակերպած «Անի» միության ցուցահանդեսներին:

Mentionnons également cette petite histoire curieuse. Le gouvernement français offre au président des États-Unis T. Wilson un album à l'occasion du Traité de Versailles. Les œuvres de plus de cinquante peintres de France sont reproduites dans cet album parmi lesquelles notre honorable compatriote a eu une digne place. Dans les années 1920-30, la peinture de marines suscite un vif intérêt en France grâce aux tableaux des peintres d'origine arménienne comme Chabanian, Makhokhian, Adamian et le Grand Aïvazovski en vogue.

A. Chabanian a dessiné avec le même succès à l'huile, au pastel (craie), à l'aquarelle, au graphite. Il a également créé des paysages magnifiques. Le don divin de la peinture a été transmis du père au fils, d'Arsène Chabanian à Héran Chabanian qui a été un peintre talentueux inné.

A. Chabanian s'est éteint à Paris, en 1949. Ce laboureur dévoué aux beaux-arts a entièrement sacrifié sa vie à son passionnant métier en cachant au fond de son âme son drame tragique, personnel et national. Il a servi honnêtement et sans réserve le pays civilisé qui l'a accueilli et, lors de sa vie, il l'a apprécié et honoré en tant que citoyen honnête et artiste émérite.

Nous avons présenté un seul peintre français d'origine arménienne, mais n'oublions pas que leur nombre est important… Reconnaissons et souvenons-nous de nos compatriotes talentueux! Même si le temps nous manque, marchons sur leurs traces lumineuses…

Susanna Mughnetsyan

UN CHERCHEUR UNIVERSEL, UN PATRIOTE COURAGEUX

Un colloque international consacré aux 125 ans de l'académicien Hovsep Orbeli.

C'était lors d'une tentative manquée pour transférer mon dossier à l'Université d'État de Leningrad (anciennement). J'étais à la recherche des moyens pour obtenir un rendez-vous avec le recteur. Soudain, dans le couloir, les étudiants se sont divisés en deux rangs et ont commencé à applaudir : c'était leur professeur académicien qui passait (à cette époque, Orbeli était le doyen de la faculté d'orientalisme). Et voici, 55 ans plus tard qu'on applaudit de nouveau ce savant légendaire dans le cadre d'un colloque international dédié aux 125 ans de sa naissance auquel ont pris part des participants venus de plus de dix pays.

Environ quarante interventions de valeur ont été faites, mais celles-ci, n'ont sans doute pas réussi à restituer toutes les pages sur les activités fécondes d'Orbeli chercheur et humaniste, car son mérite n'est pas saisissable et son don n'est pas perceptible : historien, philologue, folkloriste, dialectologue, ethnologue, historien de l'art, spécialiste des inscriptions et de la peinture rupestre et, bien sûr, archéologue.

En effet, le don de Dieu a été réservé à la famille Orbeli. Dans tous les domaines où les frères ont mis les pieds, ils ont été les premiers et ont fait des découvertes marquantes dans l'histoire de la science mondiale. Rouben a été le fondateur de l'archéologie sous-marine en ex-URSS. Quant à Lévon, ses recherches scientifiques sont également connues dans le milieu des imminents biologistes de nombreux pays.

Et Hovsep ? Pouvez-vous imaginer ce que la science arménienne, surtout l'archéologie, aurait perdu si Orbeli n'était pas né ? Encore étudiant, il a fait son entrée dans la science et, dès ses premiers pas, il a aussitôt laissé des œuvres inestimables : les fouilles d'Ani et de Van, la découverte d'inscriptions cunéiformes et des fresques de Khatchen, l'étude du dialecte de Moks et son dictionnaire, la collecte des contes, des fables et d'autres œuvres orales, la promotion, par son autorité et par ses efforts, du millénaire de *David de Sassoun* auprès de la communauté soviétique et internationale...

Նշենք նաև մի հետաքրքիր դրվագ: Ֆրանսիական կառավարությունը Վերսալյան հաշտության պայմանագրի կապակցությամբ ալբոմ է նվիրում ԱՄՆ-ի նախագահ Թ. Վիլսոնին: Ալբոմում վերատպվել էին Ֆրանսիայի հիսուն լավագույն նկարիչների աշխատանքները, որոնց մեջ իր պատվավոր տեղն էր զբաղեցրել մեր հայրենակիցը: 1920-30-ական թթ. ծովանկարչությունը Ֆրանսիայում առաջացնում է լայն հետաքրքրություն՝ հանձինս հայազգի նկարիչներ Շաբանյանի, Մախոխյանի, Ադամյանի և հրապարակի վրա գտնվող Մեծն Այվազովսկու նկարների:

Ա. Շաբանյանը հավասար հաջողությամբ նկարել է թե՛ յուղաներկով, թե՛ պաստելով (կավիճով), թե՛ ջրաներկով, թե՛ մատիտով: Նա արարել է նաև հրաշալի բնանկարներ: Հորից ժառանգաբար նկարելու աստվածատուր ունակությունը փոխանցվել էր նաև որդուն՝ Հերան Շաբանյանին, որը բնատուր շնորհով օժտված տաղանդավոր գեղանկարիչ էր:

Ա. Շաբանյանն իր մահկանացուն կնքել է 1949 թ.՝ Փարիզում: Գեղարվեստի այս նվիրյալ մշակն իր ողջ կյանքը անմնացորդ նվիրեց սիրած գործին՝ հոգու խորքում թաքցնելով իր անձնական և ազգային ողբերգական դրաման: Նա ազնվորեն ու անմնացորդ նվիրումով ծառայեց իրեն հյուրընկալած քաղաքակիրթ երկրին և դեռևս կենդանության օրոք գնահատվեց ու մեծարվեց՝ որպես վաստակաշատ արվեստագետ և օրինավոր քաղաքացի:

Մենք ներկայացրեցինք ֆրանսահայ մեկ նկարչի, բայց չմոռանանք, որ նրանք բազում են… Եկեք ճանաչե՛նք ու հիշե՛նք մեր տաղանդավոր հայրենակիցներին, թեկուզ և քիչ ազատ ժամանակ ունենալիս քայլենք նրանց լուսածիր ոտնահետքերով…

Սուսաննա Մուղնեցյան

ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՀԵՏԱԶՈՏՈՂԸ, ԽԻԶԱԽ ՀԱՅՐԵՆԱՍԵՐԸ

Միջազգային գիտաժողով՝ նվիրված ակադեմիկոս Հովսեփ Օրբելու ծննդյան 125-ամյակին:

Լենինգրադի (նախկին) պետհամալսարան փոխադրվելուս անհաջող փորձի ժամանակ ռեկտորի ընդունելությանն արժանանալու որոնումների մեջ էի. հանկարծ միջանցքի ուսանողները երկշարք բաժանվեցին ու սկսեցին ծափահարել. Անց-



Martiros Sarian *Le portrait de l'académicien Hovsep Orbeli* (1943)
Մարտիրոս Սարյան «Ակադեմիկոս Հովսեփ Օրբելու դիմանկարը» (1943)

Les pensées de ce savant patriote et courageux ont toujours été tournées vers l'Arménie Occidentale. À ce propos, Orbeli est parti pour Van pour la deuxième fois pendant les jours les plus noirs du peuple arménien : en 1916, juste après la Grande Catastrophe.

La famille Orbeli / Օրբելիների ընտանիքը

La plupart des interventions portaient sur le mérite d'Orbeli en tant qu'organisateur scientifique et novateur dans le domaine des musées. C'est avec ses efforts qu'on a créé l'Académie arménienne des sciences dont il a occupé le poste de premier président. Il a complété, ensuite sauvé l'Ermitage des fameuses « vestes en cuir ». Puis, une fois la guerre éclatée, il a transféré tous les fonds précieux du musée dans l'arrière pays.

La montée rapide des frères académiciens vers les hauteurs de la science sont semblables tout comme leur sort : les deux ont été subitement disgraciés. Hovsep Orbeli, le sauveur de l'Ermitage, a été licencié de son poste « sur sa propre demande ». C'est l'économe du musée qui a annoncé cette nouvelle à Orbeli un matin, alors qu'il se rendait à son lieu du travail. Le même départ honteux a été réservé à Lévon Orbeli, général-colonel du service médical, double héros du travail socialiste, qui a fondé plusieurs instituts et établissements scientifiques qui parfois ont été parallèlement dirigés par lui. Les deux pour cause de fidélité jusqu'au bout à la persévérance et à l'opinion du Savant…

« J'ai considéré, je considère et je continuerai à considérer Marr comme mon professeur ». Hovsep Orbeli a fait cette déclaration publique à une époque où le séminariste demi-instruit et le père des peuples Staline ne considérait pas Marr comme un savant. Par ailleurs, mon professeur inoubliable Hamazasp Hambardzoumian, dont le mérite scientifique et littéraire n'a pas été apprécié à sa juste valeur, lors d'un de ses cours a tendu sa main dans la direction du « Monument » en disant : « Et cette personne [Staline], qui ne valait même pas la semelle de la chaussure de Marr, l'a insulté ».

Les séances du colloque organisé conjointement par l'Institut d'archéologie et d'ethnologie et celui d'orientalisme de l'Académie des Sciences de la RA ont eu lieu à Erevan et à Tsakhkadzor. Les participants ont visité le complexe du monastère de Kétcharis, la maison-musée des frères Orbeli, les fouilles de Chengavit et ont contemplé la beauté du lac Sévan.

Manvel Margarian
Erevan-Lille, spécialement pour *Ma-Sis*

նում էր իրենց ակադեմիկոս պրոֆեսորը (Օրբելին այդ ժամանակ արևելագիտության ֆակուլտետի դեկանն էր): Եվ ահա 55 տարի հետո կրկին ծափահարում են առասպելական գիտնականին՝ նրա ծննդյան 125-ամյակին նվիրված միջազգային գիտաժողով մոտ տասնյակ երկրներից եկած մասնակիցները:

Թեև շուրջ քառասուն արժեքավոր զեկուցումներ լսվեցին, բայց դրանք երևի լիովին չկարողացան լուսաբանել Օրբելի գիտնականի և մարդու բազմաբեղուն գործունեության բոլոր էջերը, քանզի անընդգրկելի է նրա վաստակը, անըմբռնելի՝ նրա շնորհը. պատմաբան, բանասեր, բանահավաք, բառարանագետ, ազգագրագետ, արվեստի պատմաբան, վիմագրագետ և, իհարկե, հնագետ:

Օրբելիների գերդաստանին բաժին է ընկել հիրավի Աստծո շնորհը. ինչի դիպչում էր եղբայրների ձեռքը՝ առաջինն էր և հայտնություն միջազգային գիտության պատմության մեջ: Ռուբենը նախկին ԽՍՀՄ-ում ստորջրյա հնագիտության հիմնադիրն է, իսկ Լևոնի գիտական ուսումնասիրությունները ճանաչված են նաև աշխարհի շատ երկրների հեղինակավոր կենսաբանների շրջանում:

Իսկ Հովսե՞փը: Պատկերացնո՞ւմ եք, թե ի՞նչ կկորցներ հայ գիտությունը, հատկապես, հնագիտությունը, եթե չլիներ Օրբելին: Դեռևս ուսանող՝ նա մտավ գիտություն և անմիջապես իր առաջին քայլերով թողեց անգնահատելի գործեր. Անիի և Վանի պեղումները, սեպագիր արձանագրությունների և Խաչենի դոմնագրերի հայտնաբերումները, Մոկսի բարբառի ուսումնասիրությունն ու բառարանը, հեքիաթների, առակների և այլ բանավոր երկերի գրառումը, իր հեղինակությամբ ու ջանքերով հազարամյա «Սասունցի Դավիթը» միջազգային և միութենական հանրությանը ճանաչելի դարձնելը...

Հայրենասեր ու խիզախ գիտնականի ուշադրությունը միշտ դեպի Արևմտյան Հայաստանն է եղել: Ի դեպ, Օրբելին երկրորդ անգամ Վան մեկնեց մեր ժողովրդի ամենադժնդակ օրերին՝ Մեծ Եղեռնից անմիջապես հետո՝ 1916 թվականին:

Զեկուցումներում մեծ տեղ էր հատկացված Օրբելի գիտական կազմակերպչի, թանգարանային գործում նորարարի վաստակին: Նրա ջանքերով հիմնվեց Հայաստանի Գիտությունների Ակադեմիան, որի առաջին նախագահն էր: Էրմիտաժը համալրեց, ապա փրկեց տխրահռչակ հիմնարկության կաշվե բաճկոնավորներից: Հետո, պատերազմն սկսվելուն պես, թանգարանի ամբողջ ֆոնդի արժեքավոր մասը տեղափոխեց խոր թիկունք:

Նման են ակադեմիկոս եղբայրների արագ վերելքը դեպի գիտության բարձրունքները, նման են նաև նրանց ճակատագրերը. երկուսն էլ շնորհազրկվում են հանկարծակի: Հովսեփ Օրբելուն՝ Էրմիտաժի փրկարարին, տնօրենի պաշտոնից ազատում են «իր դիմումի համաձայն», ինչի մասին առավոտյան աշխատանքի եկած Օրբելուն հայտնում է թանգարանի տնտեսվարը: Մի քանի ինստիտուտ և այլ գիտական հաստատություններ հիմնադրած ու երբեմն միաժամանակ ղեկավարած բժշկական ծառայության գեներալ-գնդապետ, սոցիալիստական աշխատանքի կրկնակի հերոս Լևոն Օրբելուն նույնպես վիճակված էր անփառունակ հեռացում: Երկուսն էլ՝ գիտնականի հաստատակամության ու տեսակետին մինչև վերջ հավատարիմ մնալու պատճառով…

«Ես Մառին համարել եմ, համարում եմ և համարելու եմ իմ ուսուցիչը»: Այս հրապարակային հայտարարությունը նա արել է այն դեպքում, երբ թերուս սեմինարիստը՝ ժողովուրդների հայր Ստալինը, Մառին գիտնական չէր համարում: Ի դեպ, իմ անմոռանալի պրոֆեսոր Համազասպ Համբարձումյանը, որի գիտական և գրական վաստակը այդպես էլ ըստ արժանվույն չգնահատվեց, դասախոսություններից մեկի ժամանակ ձեռքը մեկնեց «Մոնումենտ»-ի ուղղությամբ և ասաց. «Եվ սա [Ստալինը], որ Մառի կոշիկի ներբանին չարժեր, հայհոյեց նրան»:

ՀՀ Գիտությունների Ազգային Ակադեմիայի հնագիտության և ազգագրության ու արևելագիտության ինստիտուտների հրավիրած գիտաժողովի նիստերը կայացան Երևանում և Ծաղկաձորում: Նրա մասնակիցները եղան Կեչառիսի վանական

TRACES ARMÉNIENNES DANS LE NORD

Jusqu'en octobre 2012, j'ignorais qu'à Lille résidait une femme au parcours de vie et au destin exceptionnels. Une femme qui pourrait s'avérer si proche tout en étant à la fois lointaine. Elle s'appelle Tatiana Mouromzeff, la petite-fille de Sergueï Mouromtsev, un des fondateurs du parti constitutionnel démocratique russe (K.D.), premier Président de la Douma d'État russe (1906), et de Maria Klimentova-Mouromtseva, cantatrice de l'opéra et première chanteuse du rôle de Tatiana dans l'opéra de Tchaïkovski *Eugène Oneguine* (1879). Elle est également la nièce d'Ivan Bounine, prix Nobel de la littérature (1933), et le connaissais de près.

En octobre, un camarade de mon université russe d'origine m'a écrit pour me demander si je connaissais Madame Mouromzeff qui habite à Lille et qui est l'auteur du livre *À la recherche de ma Russie* sorti en 2006. Elle avait donné, le 9 octobre 2012, une conférence à Moscou, à la « Maison de la Russie à l'étranger A. Soljenitsine ». Ma réaction de chercheur a été de consulter la toile mondiale. Les premières recherches m'ont agréablement et doublement surpris. Du côté paternel, Tatiana Mouromzeff est descendante directe de deux familles de la noblesse terrienne de Russie qui remontaient au 16e siècle : les Mouromtsev et les Kostomarov. Du côté maternel, elle descend directement de deux illustres et richissimes familles arméniennes de l'Empire russe : les Lianozov (Lianossian) et les Saarbekov (Sarbekian).

TATIANA MOUROMZEFF : UN PARCOURS DE VIE ET UN DESTIN EXCEPTIONNELS

Tatiana Mouromzeff-Saarbekova / Տատյանա Մուրոմցևա-Սաարբեկովա

Sa grand-mère maternelle vient de la famille Lianozov, une dynastie arménienne d'Astrakhan originaire de Perse. Les Lianozov firent fortune sur les richesses de la Caspienne, notamment dans le pétrole et dans le caviar noir. Un d'entre eux, Stepan Lianozov, également mécène et homme politique, fut le plus gros industriel de l'Empire russe au début du 20e siècle. Étant monopolistes dans l'exportation du caviar, les Lianozov avaient des « Maisons de caviar » à Moscou, à Saint-Pétersbourg et à Paris. Un des quartiers de Moscou, Lianozovo, doit son nom à cette illustre famille qui, en achetant dans les années 1880 le domaine Altoufievo, construisit dans ses limites des datchas pour les familles aisées. Plus tard (1903), le bourg a reçu le nom Lianozovo. Depuis 1902, le célèbre théâtre moscovite MXAT est abrité dans un des hôtels particuliers des Lianozov. Dans une deuxième propriété familiale se trouve aujourd'hui l'Union des cinéastes de Russie.

համալիրում, Օրբելի եղբայրների տուն-թանգարանում, դիտեցին Սևանա լճի գեղեցկությունները, այցելեցին Ծենգավիթի պեղումները:

Մանվել Մարգարյան
Երևան-Լիլ, հատուկ «Մա-Սիս»ի համար

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԵՏՔԵՐ ՆՈՐԴԻ ՇՐՋԱՆՈՒՄ

Մինչև 2012 թ. հոկտեմբերը ես չգիտեի, որ Լիլում բնակվում է ինքնատիպ կյանքի ուղիով և բացառիկ ճակատագրով մի կին, ով գտնվել է շատ մոտ, բայց միևնույն ժամանակ նաև հեռու: Նա Տատյանա Մուրոմզեֆն է, Ռուսաստանի Սահմանադրական դեմոկրատական կուսակցության (կադետների) հիմնադիրներից մեկի ու Պետական Դումայի առաջին նախագահ (1906) Սերգեյ Մուրոմցևի և օպերային երգչուհի, Չայկովսկու «Եվգենի Օնեգին» օպերայում Տատյանայի առաջին դերակատարուհի (1879) Մարիա Կլիմենտովա-Մուրոմցևայի թոռնուհին է: Նա նաև Նոբելյան մրցանակի դափնեկիր (1933) Իվան Բունինի զարմուհին է, ում հետ մոտիկից է ծանոթ եղել:

Հոկտեմբեր ամսին Ռուսաստանի համալսարանական ընկերներիցս մեկն ինձ դիմեց, թե ճանաչո՞ւմ եմ, արդյոք, «Վերադարձ դեպի իմ Ռուսաստանը» (2006) գրքի հեղինակ լիլաբնակ տիկին Մուրոմզեֆին: 2012 թ. հոկտեմբերի 9-ին Մոսկվայի «Սոլժենիցինի անվան ռուսական սփյուռքի կենտրոն»ում նրա հետ հանդիպում էր կազմակերպվել: Հետազոտողի իմ բնազդը անմիջապես տարավ դեպի համաշխարհային համացանց: Որոնումների առաջին արդյունքներն ինձ կրկնակի և հաճելիորեն զարմացրին: Հայրական կողմից Տատյանա Մուրոմզեֆը ուղղակիորեն սերում է 16-րդ դարից սկիզբ առած երկու ռուսական ազնվական ընտանիքներից՝ Մուրոմցևներից և Կոստոմարովներից: Մայրական կողմից նա անմիջականորեն սերում է Ռուսական կայսրությունում ճանաչված և շատ հարուստ երկու հայկական ընտանիքներից՝ Լիանոզովներից (Լիանոսյան) և Սաարբեկովներից (Սահարբեկյան).

ՏԱՏՅԱՆԱ ՄՈՒՐՈՄԶԵՖ. ԲԱՑԱՌԻԿ ԿՅԱՆՔԻ ՈՒՂԻ ԵՎ ՃԱԿԱՏԱԳԻՐ

Նրա մայրական տատը ծագումով Պարսկաստանից և Աստրախանում հիմնված Լիանոզովների հայկական ընտանիքից էր: Լիանոզովները մեծ կարողություն էին կուտակել Կասպից ծովի հարստությունների՝ հատկապես նավթի և սև խավիարի շնորհիվ: Այդ ընտանիքի անդամներից մեկը՝ բարերար և



Les grands-parents paternel de Tatiana Mouromzeff : Sergueï Mouromtsev, premier Président de la Douma d'État russe, et Maria Klimentova, cantatrice de l'opéra (dans le rôle de Tatiana dans l'opéra de Tchaïkovski *Eugène Oneguine*)
Տատյանա Մուրոմզեֆի հայրական կողմի տատն ու պապը՝ Պետական Դումայի առաջին նախագահ Սերգեյ Մուրոմցևը և օպերային երգչուհի Մարիա Կլիմենտով-վան (Չայկովսկու «Եվգենի Օնեգին» օպերայում՝ Տատյանայի դերում)

Son grand-père maternel Moïse (Movses) Saarbekov a été un marchand de la première Guilde, citoyen d'honneur de la ville de Moscou. Son hôtel particulier, classé monument du patrimoine culturel d'importance régionale depuis 2009 et protégé par l'État, est situé au cœur de Moscou, rue Povarskaïa 24. À sa place se trouvait une maison modeste louée depuis 1828 par E. Arsenieva, la grand-mère du célèbre poète russe M. Lermontov. À l'âge de 14 ans, Lermontov vivait avec sa grand-mère et c'est dans cette maison qu'il a écrit son premier poème *Indienne*. Plus tard, E. Arsenieva déménagea dans l'hôtel particulier voisin n° 26. C'est en 1899-1900 que, sur la commande de Moïse Saarbekov, l'ancienne maison fut rasée et le bâtiment encore présent aujourd'hui a été construit coincé entre deux grands immeubles. Cet hôtel a été la deuxième bâtisse de style moderne à Moscou. De 1920 à 1940, l'hôtel de Saarbekov, exproprié par le régime bolchevique, a abrité l'ambassade de Lituanie. De nos jours, ses locaux sont occupés par le Centre culturel lituanien dépendant de l'ambassade de Lituanie.

Tatiana Mouromtzeff est née à Moscou, en 1923. Son père, Vladimir Mouromtsev, a subi plusieurs arrestations après la Révolution bolchevique de 1917. En 1920, la jeune famille Mouromtsev a fui Moscou pour Kislovodsk (Caucase du Nord) où la sœur ainée de Tatiana est née. Étant avocat-conseil et ayant une expérience du traitement de dossiers avec des investisseurs étrangers (américains, anglais, français, allemands), Vladimir a été rappelé à Moscou pour continuer à travailler avec le peu d'entre eux qui, pour une raison ou pour une autre, avaient décidé de rester en Russie bolchevique. Comme toute personne qui traitait avec des étrangers, il a été d'emblée suspect, ce qui explique sa première arrestation en 1921. Cette fois il échappa au pire et il fut aussitôt libéré. Il ne reviendra plus après les grandes purges staliniennes : prison de Loubianka (des services secrets soviétiques, ex-KGB), ville d'Arkhangelsk, îles Solovki en mer Blanche (ancien monastère transformé en camp de travail forcé). C'est seulement en 2006, une fois les archives rendues disponibles, que Tatiana pourra enfin reconstruire le parcours tragique de la vie de son père fusillé en 1937.

L'hôtel particulier du grand-père maternel de Tatiana Mouromzeff au centre de Moscou (Povarskaïa 24) classé monument culturel d'importance régionale
Տատյանա Մուրոմզեֆի մայրական պապու առանձնատունը Մոսկվայի կենտրոնում (Պովարսկայա 24)՝ դասված մարզային նշանակության մշակութային հուշարձանների շարքում

Menacée de subir les purges staliniennes, comme des millions d'autres personnes, et succombée aux difficultés socio-économiques des années 1920-30, leur mère Natalia Mouromtseva-Saarbekova décida d'envoyer, en mars 1931, Tatiana et Olga, 7 et 10 ans respectivement, à Paris. En France elles devaient joindre leur grand-mère paternelle qui y avait trouvé refuge après

պետական գործիչ Ստեփան Լիանոզովը, 20-րդ դարասկզբի Ռուսական կայսրությունում ամենախոշոր արդյունաբերողն է եղել: Ունենալով խավիարի արտահանման մենաշնորհ, Լիանոզովները Մոսկվայում, Սանկտ-Պետերբուրգում և Փարիզում բացել էին «Խավիարի տներ»: Լիանոզովոն՝ Մոսկվայի թաղամասերից մեկը, կրում է այս ճանաչված ընտանիքի անունը, որը 1880-ական թվականներին գնած Ալտուֆիևո կալվածքի տարածքում հարուստ ընտանիքների համար կառուցել է տվել առանձնատներ: Ավելի ուշ (1903) ավանը ստացել է Լիանոզովո անվանումը: 1902 թ. սկսած հանրաճանաչ մոսկովյան ՄԽԱՏ թատրոնը հյուրընկալվել է Լիանոզովների առանձնատներից մեկի տանիքի տակ: Երկրորդ ընտանեկան սեփականության մեջ այսօր գտնվում է Ռուսաստանի կինոգործիչների միությունը:

Les grands-parents maternels de Tatiana Mouromzeff : Elisabeth Lianosova et Moïse Saarbekov, marchand de la première Guilde, avec sa fille Natalia, mère de Tatiana
Տատյանա Մուրոմզեֆի մայրական կողմի տատն ու պապը՝ Ելիզավետա Լիանոզովան և առաջին գիլդիայի վաճառական Մոիսեյ Սաարբեկովը դստեր՝ Նատալյայի՝ Տատյանայի մոր հետ

Նրա մայրական պապը՝ Մոիսեյ (Մովսես) Սաարբեկովը, առաջին գիլդիայի վաճառական էր, Մոսկվայի պատվավոր քաղաքացի: Մոսկվայի սրտում գտնվող նրա առանձնատունը (Պովարսկայա 24) 2009 թ. դասվել է մարզային նշանակության մշակութային հուշարձանների ժառանգության շարքում և պահպանվում է պետության կողմից: Առանձնատան տեղում նախկինում գտնվում էր մի համեստ տուն, որը 1828 թ. վարձակալում էր ռուս մեծ բանաստեղծ Մ. Լերմոնտովի տատը՝ Ե. Արսենիևան: Տասնչորս տարեկանից ի վեր Լերմոնտովը ապրել է տատու հետ և այս տանն է գրել իր առաջին «Հնդկուհին» պոեմը. Ավելի ուշ Ե. Արսենիևան տեղափոխվել է հարևան թիվ 26 առանձնատունը: 1899-1900 թթ. Մոիսեյ Սաարբեկովի պատվերով հին բնակելի շինությունը քանդվել և տեղում կառուցվել է ցայսօր պահպանված նորը՝ սեղմված երկու մեծ շենքերի միջև: Այս առանձնատունը մոդեռն ոճի Մոսկվայի երկրորդ շինությունն էր: 1920-ից մինչև 1940 թ. Սաարբեկովի բոլշևիկյան ռեժիմի կողմից բռնագրավված տանը գտնվել է Լիտվայի դեսպանատունը: Մեր օրերում առանձնատան սենյակները զբաղեցնում է Լիտվայի դեսպանատանը կից գործող Լիտվական մշակութային կենտրոնը:

Տատյանա Մուրոմզեֆը ծնվել է 1923 թ.՝ Մոսկվայում: Նրա հայրը՝ Վլադիմիր Մուրոմցևը, 1917 թ. բոլշևիկյան հեղափոխությունից հետո բազմիցս ձերբակալվել է: 1920 թ. Մուրոմցևների երիտասարդ ընտանիքը Մոսկվայից փախչում է Կիսլովոդսկ (Հյուսիսային Կովկաս), որտեղ և ծնվում է Տատյանայի ավագ քույրը: Լինելով փաստաբան-խորհրդատու և ունենալով մեծ փորձ օտարերկրացի (ամերիկացի, անգլիացի, ֆրանսիացի, գերմանացի) ներդնողների գործերի վարույթում, Վլադիմիրին կանչում են Մոսկվա՝ շարունակելու աշխատել նրանցից այն քչերի հետ, ովքեր տարբեր պատճառներով որոշել էին մնալ բոլշևիկյան

la révolution bolchevique de 1917. Initialement, le séjour en France était censé être temporaire (jusqu'à la chute du régime espérée naïvement par leur mère) mais il finira par devenir définitif.

Les filles seront hébergées par les sœurs franciscaines de Calais et passeront dans le Nord de la France presque toute leur vie en passant par Calais, Auchel, Douai et Lille. Olga a tôt choisi la vie de religieuse. Quant à Tatiana, elle deviendra enseignante et directrice d'une école ménagère après avoir exercé l'enseignement du français, de l'anglais, de la géométrie et du latin. C'est seulement en 1986 qu'Olga va déménager en Angleterre.

Trente longues années ont séparé les deux sœurs de leur mère. C'est en 1962 qu'elles ont enfin eu l'occasion de se rendre à Moscou en autocar, dans le cadre d'un voyage touristique. Ces voyages vont régulièrement se répéter jusqu'à la mort de Natalia Mouromtseva-Saarbekova en 1977.

Tatiana Mouromtzeff a mis 15 ans pour retracer l'histoire de sa vie, mais aussi de son illustre famille, dans son livre *À la recherche de ma Russie*. Retraité active, elle voyage beaucoup, mène une vie intense grâce notamment à ses conférences autour de son histoire.

Elle appartient à des grandes familles qui ont connu de multiples aventures, bouleversements, tragédies, et son parcours en France a été lui aussi semé d'épreuves dont vous pouvez prendre connaissance en lisant son livre *A la recherche de ma Russie*.

Garik Galstyan



La couverture du livre de Tatiana Mouromzeff *À la recherche de ma Russie*
Տատյանա Մուրոմզեֆի 2006 թ. լույս տեսած «Վերադարձ դեպի իմ Ռուսաստանը» գրքի կազմը

Ռուսաստանում: Ինչպես յուրաքանչյուր մասնագետ, ով շփվում էր արտասահմանցիների հետ, նա ի սկզբանե արդեն դասվում է կասկածյալների շարքը, ինչով և բացատրվում է նրա 1921 թ. առաջին ձերբակալությունը: Այս անգամ նրան հաջողվում է խուսափել վատթարագույնից և շուտով ազատ է արձակվում: Բայց ձերբակալվելով ստալինյան մեծ տեռորի ժամանակ և անցնելով Լուբյանկայի (խորհրդային գաղտնի ծառայությունների՝ նախկին ՊԱԿ-ի) բանտով, Արխանգելսկով, Սպիտակ ծովի Սոլովկյան կղզիներով (նախկինում վանք, որը վեր էր ածվել հարկադիր աշխատանքների ճամբարի), նա այլևս չի վերադառնում: Միայն 2006 թ., երբ արխիվները բացվեցին հանրության առջև, Տատյանա Մուրոմզեֆը կարողացավ վերջնականապես վերծանել 1937 թ. գնդակահարված իր հոր կյանքի ողբերգական ուղին:

Միլիոնավոր մարդկանց նման գտնվելով ստալինյան զտումների սպառնալիքի տակ և 1920-30 թթ. սոցիալ-տնտեսական դժվարություններից խուսափելու համար նրա մայրը՝ Նատալյա Մուրոմցևա-Սաարբեկովան 1931 թ. մարտին որոշում է իր երեխաներին՝ յոթամյա Տատյանային և տասնամյա Օլգային, ուղարկել Փարիզ: Ֆրանսիայում նրանք պետք է հյուրընկալվեին հայրական տատին, ով այստեղ ապաստան էր գտել 1917 թ. բոլշևիկյան հեղափոխությունից հետո: Ի սկզբանե Ֆրանսիայում բնակվելը պետք է լիներ ժամանակավոր (մինչև ռեժիմի տապալումը, ինչպես միամտորեն մտածում էր նրանց մայրը), բայց այն դառնում է մշտական:

Աղջիկները վերջիվերջո կացարան են գտնում Կալեի ֆրանցիսկյան քույրերի մոտ՝ Ֆրանսիայի հյուսիսում՝ Կալեում, Օշելում, Դուեում և Լիլում, անցկացնելով գրեթե իրենց ամբողջ կյանքը: Օլգան շատ շուտ ընտրում է միանձնուհու կյանքը, իսկ Տատյանան դառնում է ֆրանսերենի, անգլերենի, երկրաչափության ու լատիներենի ուսուցչուհի, այնուհետև ուսումնարանի տնօրեն: Օլգան 1986 թ. տեղափոխվում է Անգլիա:

Երեսուն երկար տարիներ բաժանել են երկու քույրերին իրենց մորից: Միայն 1962 թ. նրանք վերջապես հնարավորություն են ունենում որպես զբոսաշրջիկ ավտոբուսով մեկնել Մոսկվա: Նմանատիպ ճանապարհորդությունները կրկնվեցին պարբերաբար մինչև Նատալիա Մուրոմցևա-Սաարբեկովայի վախճանը (1977 թ.):

Մոտ 15 տարի Տատյանա Մուրոմզեֆն աշխատեց ինչպես իր ապրած կյանքի ուղու, այնպես էլ իր նշանավոր ընտանիքի պատմության շարադրանքի վրա, որն ամփոփվեց նրա «Վերադարձ դեպի իմ Ռուսաստանը» գրքում: Թոշակառու լինելով հանդերձ նա շատ ակտիվ է, ճամփորդում է, ապրում հագեցած կյանքով, հանդես գալիս իր կյանքի պատմության մասին ուսանելի դասախոսություններով:

Նա սերում է նշանավոր գերդաստաններից, որոնք անցել են բազմաթիվ փորձություններով, ցնցումներով, ողբերգություններով, և Ֆրանսիայում անցկացրած իր կյանքում ևս անպակաս չեն եղել դժվարություններն ու խոչընդոտները: Այս ամենի խոսուն վկայությունն է նրա «Վերադարձ դեպի իմ Ռուսաստանը» գիրքը:

Գարիկ Գալստյան

Tatiana Mouromtzeff et Louisette Lamarche : invitations croisées
Տատյանա Մուրոմզեֆն ու Լուիզեթ Լամարշը. փոխադարձ հյուրընկալություն

DES MOTS EN MÉMOIRE

Le 18 octobre 2012 s'est éteint Paul Robin. Un homme vénérable est disparu qui jouissait du respect et de la sympathie des Arméniens de Lille. Par ses conseils précieux, il assistait son entourage avec une grande responsabilité. S'investissant personnellement et sans contrepartie, il aidait à s'en sortir ceux qui se trouvaient dans une situation difficile. La modestie et l'honnêteté de Paul Robin étaient un modèle pour ceux qui le côtoyaient. Il a eu un parcours de vie particulier : étant d'origine française, il s'est joint au groupe de rapatriés de France à leur retour en Arménie, pendant des décennies il a vécu et travaillé dans ce pays, y a fondé une famille avec une Arménienne. Cependant, il gardait toujours en son for intérieur le désir de revenir en France, son berceau, ce qui s'est finalement réalisé.

L'association *Ararat*, les Arméniens de Lille qui connaissaient Paul Robin, sont profondément endeuillés par ce décès et présentent leurs condoléances aux membres de sa famille et à tous ses proches. Ceux qui ont connu Paul Robin garderont dans leur âme son lumineux souvenir.

LISTE DES MEMBRES DE L'ASSOCIATION *ARARAT* (2012/2013)
à la date du 10 janvier 2013

1. ADAMYAN	Arman et Diana
2. ALEXANYAN	Roman
3. ARAKELIAN	Gagik et Gohar
4. ARAKELIAN	Tigran et Mariné
5. ARAKELIAN	Armen et Mariam
6. ASKARYAN	Vahan, Arpiné et Ruzanna
7. AVANESYAN	Edgar et Rosa
8. BABIKIAN	Siranouche
9. BALYAN	Sahak et Vahan
10. BARSEGHYAN	Vahram, Gayane et Margarit
11. BAZINIAN	Youri et Lilik
12. BAZINIAN	Edouard et Narine
13. MOURNET	Vahe et Tatevik
14. BEDIKIAN	Artur et Liana
15. BEE	Benoît
16. CIZHLARIAN	Davit et Khristina
17. DANIELYAN	Karen et Kristina
18. DAVTIAN	Karen et Silva
19. DAVTYAN	Atom
20. DERMANYAN	Alla et Tigran
21. DESBUISSON	Laurent et Maro
22. DUPONT	Bernard et Maryline
23. GALSTYAN	Garik et Louisette
24. GAMBARIAN	Haïk et Gohar
25. GEVORGUYAN	Artur, Melania et Gnel
26. GHAZARYAN	Samvel et Lusine

ԽՈՍՔ ՀԻՇԱՏԱԿԻ

2012 թ. հոկտեմբերի 18-ին վախճանվեց Պոլ Ռոբենը: Կյանքից հեռացավ մի պատկառելի անձնավորություն, ով վայելում էր լիլահայերի հարգանքն ու համակրանքը: Նա մեծ պատասխանատվությամբ ընդառաջում էր իր շրջապատի մարդկանց արժեքավոր խորհուրդներով, անձնական ներդրումներով, անշահախնդիր օգնում նրանց դժվարին իրավիճակներից դուրս գալու համար: Պոլ Ռոբենի համեստ և պարկեշտ կենսակերպը ուսանելի էր բոլոր նրանց համար, ովքեր նրա հետ շփվելու առիթ են ունեցել: Յուրօրինակ կյանքի ուղի է նա անցել. լինելով ազգությամբ ֆրանսիացի, նա միացել է Հայաստան մեկնող հայրենադարձների խմբին, տասնամյակներ ապրել և աշխատել Հայաստանում, ընտանիք կազմել հայուհու հետ: Սակայն նրա հոգում միշտ եղել է Ֆրանսիա՝ իր բնօրրանը վերադառնալու փափագը, որն ի վերջո իրականություն է դարձել:

«Արարատ» միությունը, Պոլ Ռոբենին ճանաչող լիլահայերը խորապես վշտացած են նրա մահվան կապակցությամբ և ցավակցում են հանգուցյալի ընտանիքի անդամներին, բոլոր հարազատներին: Նրան ճանաչողներն իրենց հոգում վառ կպահեն Պոլ Ռոբենի հիշատակը:

«ԱՐԱՐԱՏ» ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԸ (2012/2013)
2013 թ. հունվարի 10-ի դրությամբ

27. GULBUDAGHYAN	Movses et Rima
28. HAMBARCUMYAN	Armen et Louciné
29. HANEVIZIAN	Léon
30. HANEVIZIAN	Hamlet et Arpine
31. HOVHANNISYAN	Pavel et Ani
32. KARAPETYAN	Martin et Anush
33. KATCHARIAN	Hovhannes
34. KHATCHATRYAN	Armine
35. KHATCHATRIAN	Vram, Lilik et Edmond
36. LMENTSIAN	Razmik et Jacqueline
37. MARDOYAN	Vardan et Gayane
38. MARGARYAN	Manvel et Jacqueline
39. MIKOYAN	Arsen et Elena
40. MKRTCHYAN	Edgar
41. NAZARYAN	Aram et Kristine
42. NIKOGHOSYAN	Armen et Haykouche
43. ORDOYAN	Martin et Kristine
44. PARSADANIAN	Armen et Lianna
45. POGHOSSIAN	Anouchavan et Nariné
46. SAHAKIAN	Armen et Elena
47. SARGSYAN	Khachatur et Lusine
48. SARGSYAN	Vazgen et Anna
49. SHIRINYAN	Seyran et Anna
50. TADEVOSYAN	Armen et Narine
51. TOPCHYAN	Vardan et Lilit
52. TOPCHIAN	Emin, Vardouhi et Anahit
53. TOPALIAN	Mourad, Hripsime et Maria
54. VANUXEEM	Bruno et Lena
55. VATYAN	Hamlet et Armine
56. VOSKANYAN	Voskan et Natella
57. VOSKRITCHYAN	Ararat et Kristine
58. YEGHIAZARIAN	Norayr et Marine
59. YEGHINIAN	Styopa et Anahit
60. YEGHINIAN	Armen et Bella
61. YERITSIAN	Sargis et Kristine
62. ZAKARIAN	Karen et Kristine
63. ZAKARIAN	Yepraksia et Haroutioun

ASSOCIATION ARARAT
65 Rue Saint Bernard
59000, Lille

BULLETIN D'ADHESION

Nom, Prénom ____________________________

Adresse ________________________________

____

Mail ____________________ Téléphone __________

Adhère à l'association ARARAT pour l'année 2008/2009
a payé une adhésion de 15 euros (par famille)
(Date et Signature)

Ont collaboré avec ce numéro:
Jaqueline Kasparian, Manvel Margaryan, Ruzanna Askaryan, Susanna Mughnetsyan, Tamara Grigoryan, Dominique Bajart, Victor Martinez

Այս համարի հետ համագործակցել են՝
Ժակլին Կասպարյանը, Մանվել Մարգարյանը, Ռուզաննա Ասկարյանը, Սուսաննա Մուղնեցյանը, Թամարա Գրիգորյանը, Դոմինիկ Բաժարը, Վիկտոր Մարտինեզը

Pour contact et pour toute remarque, vous pouvez nous joindre aux adresses suivantes :
Par mail : aadelille@gmail.com
Par courrier : 12, Rue Blériot, 59 260, Hellemmes-Lille, France
Par téléphone : 09.53.10.84.75, 09.51.36.49.21

Այս համարին առնչվող բոլոր դիտողությունները կարող եք մեզ հայտնել հետևյալ հասցեներով՝
Էլեկտրոնային փոստ՝ aadelille@gmail.com
Փոստային հասցե՝ 12, Rue Blériot, 59 260, Hellemmes-Lille, France
Հեռախոսներ՝ 09.53.10.84.75 և 09.51.36.49.21

Responsables de publication en français :
Louisette Lamarche, Garik Galstyan
Responsable de publication en arménien : Garik Galstyan
Traductions : Garik Galstyan

Ֆրանսերեն հրատարակչության պատասխանատուներ՝
Լուիզեթ Լամարշ, Գարիկ Գալստյան
Հայերեն հրատարակչության պատասխանատու՝
Գարիկ Գալստյան
Թարգմանությունները՝ Գարիկ Գալստյանի

Imprimé par nos soins.
À ne pas jeter sur la voie publique.

Տպագրված է մեր միջոցներով:
Չգցե՛լ հասարակական վայրերում:

ISSN 2117-5772

ISSN 2117-5772